Իշխանությունները վախենում են «Ուժեղ Հայաստանից», եւ Ալիկ Ալեքսանյանի ձերբակալությունը վախի ցուցադրում է, որովհետեւ տեսնում են, թե ինչ հեղինակություն ունի Ալեքսանյանը, ինչքան է ժողովուրդը սիրում նրան, եւ փորձում են մեկուսացնել, շարքերից հանել մեր ամենաուժեղ, ամենավառ ներկայացուցիչներից մեկին:

Կարդացեք՝ էջ 4

Նույն պահին, երբ Պուտինը շնորհավորում էր Փաշինյանին, «Ռոսսելխոզնադզորը» հայտնեց, որ Հայաստանից ձկան արտահանման հավաստագրումը դադարեցվում է, որ միայն 2 ընկերություն կկարողանա ձուկ արտահանել Ռուսաստան: Նույն օրը կազմակերպությունն արգելք սահմանեց Հայաստանի մրգերի եւ հատապտուղների արտահանման վրա:

Կարդացեք՝ էջ 5

Գազի թանկացումը, էներգետիկ անվտանգության խնդիրները կարող են այնպիսի իրավիճակ ստեղծել, որ մեր ժողովրդի կյանքը դժոխքի վերածվի: Տնտեսությունը կփլուզվի, հանրապետության գոյատեւումն ապահովող հուսատու բոլոր «լույսերը» կհանգչեն: Այդ խավարի մեջ հայտնվելու է ժողովուրդը, ոչ թե իշխանության ներկայացուցիչները:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 88 (4223), 3 հունիս, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

ՔՊ-ի քարոզարշավի ժամանակ ամենանկատելի բանը, հանրության քննադատությունից զատ, օրվա մի մասն ուտել-խմելու վրա անցկացնելն է: Ամեն օր երկու-երեք վայրում սեղան են փռում՝ զանազան ուտեստներով, եւ Փաշինյանը քաղաքացիների հետ բաժակ է բարձրացնում ու անդադար ծամում: ՔՊ մեր աղբյուրներից, սակայն, տեղեկացանք, որ իրականում ոչ թե քաղաքացիներն ինքնակամ հյուրասիրում են «սիրելի վարչապետին», այլ ուտուշ-խմուշը կազմակերպում է հենց ՔՊ-ն: Կուսակցության քարոզչական բաժնում հատուկ բաժին է բացվել, որը գումար է տրամադրում իրենց նախանշած վայրում հյուրասիրություն բեմադրելու համար: Սա պարզապես ձեւ է՝ ցույց տալու իբր ժողովրդի սերը ՔՊ-ի նկատմամբ: Այնինչ նախապես հստակ տեղորոշվում է «պատահական հյուրասիրության» վայրը, ստուգվում է սնունդը: Ուտելու ոչ գեղեցիկ տեսարանն անգամ դիտմամբ է ուղիղ եթեր հեռարձակվում՝ կրկին հանրության իբր ջերմ վերաբերմունքն ընդգծելու համար: Այնինչ ժողովուրդն ինքն էլ է զարմանում, թե այդ առատ սեղանն ինչպես հայտնվեց իրենց «բեսեդկայում»: Ի դեպ, չնայած այս հանգամանքին, կիքսերից խուսափել հնարավոր չի լինում: Օրեր առաջ, օրինակ, Քանաքեռ-Զեյթունում հրավիրված նվագախումբն Արարատ լեռան մասին երգը երգեց՝ հստակ նպատակադրմամբ:

Այունյաց երբեմնի խրոխտ ընդդիմադիր համայնքապետերից միայն Գեւորգ Փարսյանը չդավաճանեց իր սկզբունքներին, չծնկեց վարչախմբի ճնշումների առաջ եւ այս ընտրություններին էլ, առանց վախենալու, մասնակցում եւ աջակցում է ընդդիմադիր ուժերից մեկին՝ Արման Թաթոյանի ղեկավարած «Միասնության թեւեր» նախաձեռնությանը, որը «Շանթ» կուսակցությունների դաշինքի հետ համատեղ է մասնակցում, իսկ Փարսյանը «Շանթ» կուսակցության քվոտայով է համայնքապետ ընտրվել: Նախօրեին Կապանում Թաթոյանի մասնակցությամբ բազմամարդ հավաքն էլ նա էր կազմակերպել եւ անձամբ ներկա էր մշակույթի տանն անցկացվող հավաքին: Մեզ ասացին, որ Փարսյանի համար համայնքային ենթակայությամբ գործող հիմնարկների աշխատակազմերը մեկ մարդու պես մասնակցել էին հավաքին, իսկ դահլիճն ավելի քան 700 մարդ է տեղավորում: Հիշեցնենք, որ նախորդ ընտրություններին Այունյաց «ռեմբոները»՝ Մանվել Փարամազյանը եւ Առուշ Առուշանյանը նույնպես ընդդիմադիր ճամբարում էին, սակայն դրանից հետո երկուսն էլ խոնարհաբար ընդունեցին Փաշինյանի «կրոնը»:

Հակառակ էֆեկտ

Ինչքան մոտենում է քվեարկության օրը, այնքան անկառավարելի է դառնում իշխանությունը, այնքան ապօրինի են դառնում իրավապահ մարմինների մեթոդները, այնքան մեծանում են ճնշումները ոչ իշխանական հանրության վրա: Նպատակը պարզ է՝ վախեցնել նրանց, ում կարելի է, բռնել նրանց՝ ովքեր չեն վախենում, սեփական թիմի գործողություններին վստահություն հաղորդել, թե՝ հաղթում ենք, հանրությանը ներշնչել, որ պարտված է: Որքան էլ զարմանանք այս իշխանությունների անպատկառության, իրավապահների՝ անօրինականության, քաղաքացիների՝ անպաշտպանության, հասարակության հանդուրժողականության վրա, պետք է արձանագրենք, որ 2026 թվականի նախընտրական Հայաստանում աննախադեպ իրավիճակ է հաստատվել: Նախկինները կերազեին այսպիսի անպատժելիության մթնոլորտ եւ ընտրակեղծարարության նման անվերահսկելի միջավայր: Բայց պետք է արձանագրենք նաեւ երկու իրողություն. մեկն այն է, որ այս բռնել-նստեցնել-դատել-մեկուսացնել սցենարը վկայում է սոսկ այն մասին, որ ՔՊ-ի գործերը վատ են՝ շատ վատ: Մյուսն այն է, որ այս գործողություններն ավելի են վատացնելու ՔՊ-ի վիճակը, որովհետեւ ոչ մի՝ անգամ հանդուրժող ու ամեն ինչի հետ համակերպվող հայ հասարակությունը չի սիրում, երբ իրեն տեռորի են ենթարկում, ճնշում, ստիպում: Երբ այդ ճնշումներն անցնում են թույլատրելի սահմանները: Այս հետապնդումները, ամենօրյա խուզարկություններն ու կալանքներն ավելի են նվազեցնելու ՔՊ-ի՝ առանց այն էլ ոչ շատ ճոխ քվեների քանակը: Դժվար է ասել, թե ով է նման մարտավարության հեղինակը, եւ այդ որ «փայլուն» ուղեղում է ծագել վախեցնելով վերարտադրվելու գաղափարը, բայց վստահ եմ, որ դա միանգամայն հակառակ էֆեկտն է ունենալու, եւ այս գաղափարի հեղինակներն ակամայից կամ գիտակցված «արջի ծառայություն» են մատուցել Փաշինյանին:

ՊՆ զինծառայողներին, տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներին, ՊՆ վարչական շենքի աշխատողներին sms-ով հրահանգվել է լայքել եւ տարածել Սուրեն Պապիկյանի հրապարակային հայտարարությունները, գրառումները, որոնցում նա պատասխան է պահանջում «կալուգացի օլիգարխից», թե ինչու Կարապետյանների որդիները չեն նահատակվել պատերազմում, նրանց դասալիքներ է անվանում եւ այլն: Մեզ փոխանցեցին, որ բաժինների, վարչությունների պետերին զգուշացվել է, որ իրենց ենթականերին sms-ներ ուղարկեն, որպեսզի «հավանեն» նախարար Պապիկյանի հատկապես այդ գրառումներն ու ելույթները: Ասում են, որ բազմաթիվ զինվորականներ, ՊՆ աշխատողներ, աշխատանքը չկորցնելու վախից, ստիպված են «հավանել» եւ տարածել: Ի դեպ, մեզ փոխանցած ահազանգից հետո «անցանք» Պապիկյանի ֆեյսբուքյան էջով եւ պարզեցինք, որ Պապիկյանի՝ Սամվել Կարապետյանին վերաբերող որոշ գրառումներ նրա գրառումներին ոչ բնորոշ շատ «հավանումներ եւ տարածումներ» ունեն:

ՔՊ-Ն ՔՖՈՒՐ Է ՖՌՈՅՆՈՒՄ

ՔՊ-ն ամենաանհավանական միջոցների է դիմում՝ ձայներ «քերելու» համար: Մեր տեղեկություններով, հատկապես մարզերում, մարզպետարանների ենթակայությամբ գործող հիմնարկներում, ինչպես նաեւ՝ իշխանականներին պատկանող օբյեկտներում սկսել են «քֆուր ֆռռացնել»՝ կանչում են ոչ իշխանական աշխատակիցներին եւ պարտադրում, որ տղամարդավարի խոսք տան կամ «քֆուր ուտեն», որ ՔՊ-ին են ընտրելու, եւ մարդիկ, աշխատանքից չզրկվելու համար, ստիպված են լինում ենթարկվել ՔՊ-ականների պահանջներին: Բայց սա չէ ամենաաբսուրդը. մեր զրուցակիցներից մեկը խոստովանեց, որ զզվում է դրանցից, բայց ստիպված է լինելու ընտրել ՔՊ-ին, քանի որ «քֆուր է կերել»:

ՎԱՐՈՒՅԹ

ՍԱՐՍԱՓԱԶԴՈՒ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՑ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

«Ուժեղ Հայաստան» դաշինքի համակարգող Նարեկ Կարապետյանի նախընտրական հանդիպումների հետքերով քրեական վարույթներ են հարուցվում: Ոչ միայն դաշինքի անդամներն են ենթարկվում ճնշումների, հալածանքների, այլեւ նրանք, ովքեր հանդգնում են մասնակցել ու ինչ-որ ակտիվություն ցուցաբերել այդ հանդիպումների ժամանակ: Նրանցից մեկի մասին երեկ հաղորդեց Քննչական կոմիտեն: Այդ անձի անուն-ազգանունը չեն հայտնում, իբր՝ անմեղության կանխավարկածը չխախտելու նպատակով: Բայց տեքստը կարդալով հասկանում ես, որ այն ամբողջությամբ միտված է քաղաքացիներին վախեցնելուն, նրանց բերանը փակելուն, ընտրությունից մի քանի օր առաջ սարսափ տարածելուն: Եվ պարտադիր բոլոր հաղորդագրությունները սկսվում են՝ ««Ուժեղ Հայաստան» ուժի գրասենյակի ներկայացուցիչ» էսինչի նկատմամբ հարուցվել է հետապնդում: Ակնհայտորեն, հակաքարոզչության նպատակով շեշտվում է տվյալ քաղաքական ուժի անունը:

«Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Ալիկ Ալեքսանյանը մայիսի 21-ին տեսանյութ էր տարածել, որում մի տղամարդ, որը ներկայացվում էր որպես կամավոր, ազատամարտիկ, փակ դեմքով ասում էր, որ Ջերմուկի ուղղությամբ դիրք է հանձնվել, եւ որ իրենք մայիսի 8-ին դուրս են եկել այդ դիրքից: Նույն օրը պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ նշվածն ապատեղեկատվություն է, ու հորդորեց իրավապահ մարմիններին՝ ուսումնասիրել տեսանյութը եւ իրավական գնահատական տալ: Նրանք էլ ուսումնասիրեցին եւ գործ հարուցեցին: Կարդում ենք ՔԿ հաղորդագրությունը. «Սուտ մատնություն կատարած անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում… Ներկայացված մեղադրանքում Ա. Խ.-ն իրեն լիովին մեղավոր է ճանաչել, զղջացել Ջերմուկի ուղղությամբ տեղակայված մարտական դիրքն իբր հակառակորդին հանձնելու վերաբերյալ սուտ տեղեկություն հայտնելու համար՝ պատճառաբանելով, որ գտնվելով ոչ սթափ վիճակում՝ մասնակցել է Ն. Կ.-ի կողմից կազմակերպված հավաքին, որտեղ հանդիպել է Ա. Ա.-ին, ով տեղեկացված լինելով իր սոցիալական խնդիրների մասին՝ անմիջապես՝ 2026 թվականի մայիսի 20-ին կազմակերպել է լրագրողի հետ հարցազրույցը: Ա. Խ.-ն նշել է նաեւ, որ ավելի վաղ՝ 2026 թվականի ապրիլի 17-ից մինչեւ մայիսի 8-ը, որպես դիտորդ, մարտական հերթապահություն է ստանձնել Ջերմուկի զորամասի N մարտական դիրքում: Մարտական հերթապահության օրերին գտնվել է սթափ վիճակում»:

Հաղորդագրությունից 37 թվի հոտ է փչում: Թե ով է ազատամարտիկը, ունի՞ արդյոք փաստաբան, ի՞նչ պայմաններում են նրանից ինքնախոստովանություն վերցրել՝ քննչականի խոսնակը չի հայտնում՝ ասելով, որ հայտնած տեղեկատվությունից ավելին չի կարող տրամադրել: Մի տվյալ միայն ավելացրեց՝ նրա նկատմամբ բացակայելու արգելք է կիրառվել: Անկախ քեզնից՝ պատկերացնում ես սոցիալական բեռի տակ կքած խեղճ զինվորականի, որին բերման են ենթարկում, դիմացը թղթեր են շարում, ճնշում, գոռում, երկար պահում, երեւի չեն էլ թողնում, որ գնա միզի, ստիպում են ստորագրել թղթերը:

Այսպես՝ որքան ավելի մոտենում է ընտրության օրը, այնքան ավելի ահասարսուռ ու խորհրդավոր են դառնում ՔԿ-ի եւ Հակակոռուպցիոնի հաղորդագրությունները: Դրանք պատմում են հանցագործությունների մասին, որոնք կարծես այլմոլորակայիններն են իրականացրել՝ անհասկանալի մարդիկ, անհասկանալի դրդապատճառներով: Նախօրեին հայտնեցին նաեւ, որ կալանավորված է մարտին ԱԱԾ շենքի մոտ պայթյուն իրականացրած անձը: Նպատակը «բնակչությանը եւ դրա առանձին խմբին ահաբեկելը», «հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելն» է եղել՝ ըստ ՔԿ-ի: Տարիներ առաջ մեկն էլ էր պայթեցրել խորհրդային ԱԱԾ-ի շենքը, մի պոետ, որն իր օրերը Սեւանի հոգեբուժարանում ավարտեց:

Հաջորդ գլուխկոտրուկը Փաշինյանին սպանելու փորձն է: Օրեր առաջ էլ քարոզարշավի ժամանակ նա մի կասկածելի տեսանյութ էր ցուցադրել, որում դիմակավորված անձինք Արցախի բարբառով իր հասցեին սպառնալիքներ էին հնչեցնում: Մի երկու օրից նոր «օպերատիվ տվյալ» հրապարակեց՝ ասելով, թե այդ անձինք Հայաստանում չեն: Համացանցով լուրեր տարածվեցին, որ տեսանյութը նկարահանվել է հենց իշխանության ենթակայության ՉԼՄ-ներից մեկում: Եվ երեկ, ահա, ՔԿ-ն նաեւ այս «հանցագործությունը բացահայտեց»: Հավանաբար, հանձնարարություն կա Փաշինյանի բերանից թռած ամեն ինչը հիմնավորել ու բացահայտել, դրա հետեւքերով մարդ ձերբակալել, թեթեւ «քսելով» Ռուսաստանին: Այնքան էլ համոզիչ չի ստացվում, բայց դե, ՔԿ-ն այդքան է կարողանում: Ի վերջո, ինչպե՞ս է հնարավոր հիմնավորել այն, ինչը չի հիմնավորվում: Ահա, օրինակ, ՔԿ-ն հաղորդում է, որ «մեծածավալ», «մեծաթիվ», «ապացուցողական» գործողությունների արդյունքում «բացահայտվել» է ՀՀ վարչապետի նկատմամբ սպանության նախապատրաստություն կատարած անձանցից մեկի ինքնությունը՝ ոմն Մ. Մ.-ի: Խոսնակ Կիմա Ավդալյանը նրա անուն-ազգանունը չի տալիս, ո՞վ է փաստաբանը՝ չի ասում: Հասկանում է, որ եթե ասի, անպայման զանգենք, ու մարդկանց սեւացնելու, միակողմանի, շինծու, մանիպուլյատիվ մեղադրանքներով վարկաբեկելու, ամենակարեւորը՝ նախընտրական սարսափ տարածելու օպերացիան չի հաջողվի: Բայց Հանրայինի լուրերի հաղորդման ժամանակ ՔԿ-ն, չգիտես ինչու, հայտնում է ձերբակալվածի անունը՝ Միեր Միրզոյան, օտար երկրի, իմա՝ Ռուսաստանի բնակիչ: Ուրեմն, այդ Միեր Միրզոյանը, ըստ ՔԿ «առերեւույթ փաստական» տվյալների, 4 հոգով ցանկացել են սպանել վարչապետին: Դրա համար «ձեռք են բերել հանդերձանք եւ դիմակներ, ինչպես նաեւ՝ ՀՀ վարչապետի գտնվելու վայրերի, քարոզարշավի երթուղիների վերաբերյալ հավաքել տեղեկություններ՝ այդկերպ նախապատրաստելով սպանությունը, որից հետո նշված հանդերձանքով եւ դիմակավորված տեսաձայնագրել եւ տարածել են տեսաուղերձ՝ ուղղված ՀՀ վարչապետին, որի ընթացքում հնչեցրել են սպառնալիքներ»: Հետո այս սպառնալիքները նրանք նաեւ ձայնագրել են ու ինչ-որ փակ կայքից տեսաուղերձ են տարածել՝ «խուչընդոտելով» նախընտրական քարոզչությունը: Այնքան էլ հասկանալի չէ, թե ինչու են հանցագործները տեսաուղերձ նկարում, տարածում, հասանելի դարձնում վարչապետին, եթե իրոք պատրաստվում էին սպանել նրան: Ինչպես ասում են ռուսները՝ սատանան ոտքը կկոտրի, բայց այս ամենից գլուխ չի հանի:

ՊԱՐԵԿԻՆ ԾԵԾԱԾ ԴԱՎԻԹ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԸՆԿԵՐԸ ԲԱՆՏ ՉԻ ՆՍՏԻ

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանի մտերիմ ընկերն ու խորհրդականը՝ Արտյոմ Հովհաննիսյանը, որը մեղադրվում էր ոստիկանության պարեկային ծառայության աշխատակցին հայհոյելու, նվաստացնելու եւ ծեծի ենթարկելու համար, մեր տեղեկություններով, չի ազատազրկվի: Չնայած դատարանը նրան դատապարտել է 4 տարվա ազատազրկման, պատիժը պայմանականորեն չի կիրառվել, եւ նա փաստացի մնալու է ազատության մեջ: «Հրապարակ»-ի տեղեկություններով՝ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, դատավոր Արսեն Գեղամյանի նախագահությամբ, օրեր առաջ ավարտել է քրեական գործի քննությունը: Գործը քննվել է համաձայնության վարույթով, քանի որ դատաքննության ընթացքում մեղադրանքի եւ պաշտպանական կողմերը հաշտության են հասել:

«Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից դատավճռի մասին ամբողջական տեղեկատվության ծանոթացանք, ըստ որի՝ Արտյոմ Հովհաննիսյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասով՝ յուրաքանչյուրով 2 տարվա ազատազրկման: Պատիժները գումարելու արդյունքում դատարանը սահմանել է 4 տարվա ազատազրկում, սակայն նույն դատավճռով կիրառել է Քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածը եւ պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով 5 տարվա փորձաշրջան: Հովհաննիսյանի նկատմամբ նախաքննության ընթացքում կիրառվել էր բացակայելու արգելք, ինչպես նաեւ՝ կասեցվել էր պաշտոնավարումը: Դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո նա, ըստ էության, կարող է վերադառնալ Շիրակի մարզպետի խորհրդականի իր պաշտոնին:

Ըստ մեղադրանքի՝ դեպքը տեղի է ունեցել 2025 թ. հոկտեմբերի 29-ին, Գյումրիում գտնվող պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի տարածքում: Քրեական գործի նյութերի համաձայն՝ ոչ սթափ վիճակում գտնվող Արտյոմ Հովհաննիսյանը ծառայողական ավտոմեքենայով ժամանել է պահպանվող տարածք, պահանջել բացել դարպասները, իսկ մերժում ստանալուց հետո ագրեսիվ վարքագիծ է դրսեւորել, քաշքշել ծառայություն իրականացնող պարեկին, միջադեպ հրահրել: Մեղադրական եզրակացության համաձայն՝ ավելի ուշ Հովհաննիսյանն ու նրա ընկեր Գոռ Սարոյանը, գործելով խմբով, սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել ծառայողական պարտականությունները կատարող պարեկի հասցեին, ապա բռնություն գործադրել նրա նկատմամբ՝ հարվածներ հասցնելով դեմքին եւ մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Այս գործը լայն արձագանք էր ստացել հատկապես այն պատճառով, որ խոսքը վերաբերում էր մարզպետի մերձավոր շրջապատի ներկայացուցչի կողմից իրավապահ մարմնում ծառայողի նկատմամբ բռնության կիրառմանը: Սակայն դատավճռի արդյունքում ստացվել է մի իրավիճակ, երբ դատարանը փաստացի հաստատել է կատարված արարքների քրեական բնույթը, նշանակել ազատազրկում, բայց միաժամանակ մեղադրյալը չի կրի իրական պատիժ: Ավելին՝ նա կարող է վերադառնալ պետական համակարգում իր զբաղեցրած պաշտոնին:

Սա հերթական դեպքն է, երբ իշխանության ներկայացուցիչը կամ իշխանության հետ սերտ կապեր ունեցող անձը հայտնվում է քրեական սկանդալի կենտրոնում, նրան մեղադրանք է առաջադրվում, դատարանի կողմից նա ճանաչվում է մեղավոր, սակայն, ի վերջո, խուսափում է իրական պատասխանատվությունից:

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԽՍՏԱՑՐԵԼ ԵՆ ՀԱՅԵՐԻ «ՊԱՍՊՈՐՏ ԿՈՆՏՐՈԼԸ»

ԹԵՐԹԵՐ

Ինչպես հայտնի է, Ռուսաստանը հունիսի 2-ից ժամանակավոր սահմանափակել է Հայաստանից թարմ խաղողի եւ կորիզավոր պտուղների առաքումները՝ բալի, կեռասի, ծիրանի, սալորի, դեղձի, նեկտարինների, ինչպես նաեւ՝ այդ ողջ արտադրանքի մատակարարումները ԵԱՏՄ մյուս երկրներ: Այս մասին հայտարարել է «Ռոսսելխոզնադզորը»: Հայտարարել են, որ ԵԱՏՄ երկրների ֆիտոսանիտարական անվտանգությունը ռիսկի տակ է, եւ նման որոշում է ընդունվել ԵԱՏՄ երկրների ֆիտոսանիտարական պահանջների հաճախակի դարձած խախտումների պատճառով, ինչպես նաեւ՝ «կարանտինային օբյեկտների հայտնաբերման» հետեւանքով: Այլ կերպ ասած՝ «Ռոսսելխոզնադզորը» մեր գյուղատնտեսական արտադրանքում վտանգավոր վնասատուներ կամ հիվանդություններ է բացահայտել, որոնք կարող են սպառնալ մարդկանց ու կենդանիների առողջությանը:

Հիշեցնենք, որ նախկինում էլ նմանատիպ սահմանափակումներ են մտցվել ծաղիկների, բանջարեղենի, ելակի, ձկնեղենի, ինչպես նաեւ՝ «Ձերմուկի», գինիների, հայկական երեք արտադրողների գինու ու կոնյակի նկատմամբ: Բայց պարզ է, որ ֆիտոսանիտարիան ոչ մի կապ չունի՝ սրանք բացառապես քաղաքական որոշումներ են: Այնպես որ, մեր գյուղացիներն արդեն հասցրել են ճաշակել Փաշինյանի եվրոպահաճո քաղաքականության դառը պտուղները: Բայց ինչ են զգում Ռուսաստանում ապրող հայերը, արդյոք նրանց նկատմամբ էլ է փոխվել վերաբերմունքը:

Հարցն ուղղեցինք ռուսաստանաբնակ քաղաքագետ **Մարիամ Հովսեփյանին**, որն ակտիվորեն մասնակցում է հայ համայնքում կազմակերպվող բոլոր միջոցառումներին եւ լայն կապեր ունի նաեւ ՌԴ պաշտոնյաների հետ: Նա ասաց, որ ՌԴ-ում, մասնավորաբար Մոսկվայում, դեռեւս արտառոց դեպքեր չեն գրանցվել, սակայն արդեն խստացվել են հայերեն փաստաթղթերի զննությունը, անձնագրային վերահսկողությունը: «Հայերի փաստաթղթերն ավելի ուշադիր են ստուգում: Աշխատանքային պայմանագիր կնքելուց կամ գրանցվելուց շատ ավելի մանրամասն ստուգումներ են իրականացվում, ինչը նախկինում չկար: Հայերի շրջանում խուճապային տրամադրություն կա: Մեզ շատ արագ են հասնում լուրերը, թե ինչ է կատարվում Հայաստանից Ռուսաստան ճանապարհներին: Ինձ, օրինակ, զանգում են մարդիկ եւ միամտաբար փորձում են ծանոթ մեջ գցել, որ ինչ-որ բեռ անցկացնեն, ինչը, իհարկե, անհնար է, ու խոսքի մեջ ասում են, որ շատ տխուր է իրավիճակը: Օրինակ, ելակի հարցով էին զանգել: Ասածս ակնհայտ է նաեւ, երբ ուսումնասիրում ես ՌԴ պաշտոնյաների սոցցանցերի էջերը: Հայերի թողած մեկնաբանություններին հետեւելուց է երեւում այդ տրամադրությունը, խոսակցությունների մակարդակով: Մարդիկ դժգոհում են պետական մարմիններում գրանցման ընթացքում պասպորտ կոնտրոլի ժամանակ կիրառվող խստացումներից, այսինքն՝ հող է նախապատրաստվում, որ հետագայում այստեղ ապրող ՀՀ քաղաքացիներին էլ որոշ հարցերում սկսեն նեղել: Բայց առայժմ դա հսկողության խստացման տեսքով է երեւում: Բուն գործողությունների դեռ չեն անցել, բայց կա սպասում: Բոլորը հասկանում են, որ ինչպես ժամանակին վրացիներին էին նեղում, այնպես էլ իրենց այստեղ տխուր օրեր են սպասվում: Սա ակնհայտ է»,- ասում է Մարիամ Հովսեփյանը:

Հայերը դեռ չեն հասկանում, որ այն, ինչ իրենք բերում են Ռուսաստան, այս երկիրը հաջողությամբ կարող է ստանալ Ուզբեկստանից՝ ինչպես ծաղիկները, Կրասնոդարի երկրամասից՝ ինչպես միրգն ու բանջարեղենը: Կրասնոդարն ահռելի ծավալների միրգ, բանջարեղեն է առաքում Մոսկվա, իսկ մենք՝ հայաստանցիներս, անիմաստ կերպով փաստացի կորցնում ենք մեր առանցքային տնտեսական կապերը:

«Այստեղ չեն հասկանում, թե ինչպես կարելի է՝ մնալով որպես ԵԱՏՄ անդամ պետություն, ունենալով ԵԱՏՄ երկրի կարգավիճակ, դիտավորյալ առիթներ ստեղծես, որ քեզ սահմանափակեն, որ դու տույժեր կրես՝ դրանով հարվածելով սեփական քաղաքացու գրպանին, խեղճ գյուղացիներին»,- վրդովվում է Մարիամը:

Վստահ եմ, որ Դուք եւ մեր մյուս հայրենակիցները Մոսկվայում հետեւում եք մեր ընտրական գործընթացին, ինչ տպավորություն ունեք ընդդիմության ու իշխանության այս քարոզչական պատերազմից: Հարցին պատասխանելով՝ քաղաքագետը նշում է, որ տպավորություն ունի, թե երկու կողմն էլ չի հասկանում, թե ինչ աղետալի հետեւանքներ են լինելու, ու ինչ է սպասվում: «Երկու կողմն էլ իրենց անձնական տրամագծի վերաբերյալ են ավելի շատ մտածում: Ես տեսնում եմ, որ, որպես իշխանության այլընտրանք, ձեզ մոտ ընկալվում է Սամվել Կարապետյանը: Բայց, իմ կարծիքով, նրա մուտքը քաղաքականություն՝ որպես ազգային բարերարի, հայի, որպես ազգային արժեքները կրողի, Եկեղեցու պաշտպանի, ինչպիսին որ նրան հարգում ու ճանաչում են, պետք է լիներ ավելի հզոր ու ավելի պատրաստված: Նա ի զորու է հայերին սպասվող տնտեսական աղետից դուրս բերել, բայց տեսնում եմ, որ երկու կողմից էլ երգում են ու պարում, ուրախանում են ու ոնց որ չզգան այն աղետը, որ գալիս է հայ-ռուսական հարաբերությունների վատթարացման հետեւանքով»:

Այդ աղետը քաղաքագետը բնորոշում է որպես տնտեսական պատերազմ: «Պոպուլիզմի շնորհիվ մի անգամ սկսվեց պատերազմ, էս անգամ էլ տնտեսական պատերազմ է սկսվում, ու ողբերգությունն այն է, որ ոչ ընդդիմությունը, ոչ իշխանությունը ոչինչ չի կարողանում առաջարկել՝ այդ տնտեսական պատերազմը կանխելու համար»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՔՊ ՇՏԱԲՆԵՐՈՒՄ ՀՈՒՍԱՀԱՏ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ

Վերջին օրերին ՔՊ շտաբներում, ըստ իշխանական մեր աղբյուրի, անորոշ, ավելի ճիշտ՝ հուսահատ տրամադրություններ են տիրում: Որքան էլ ՔՊ-ն եւ իր արտաքին հովանավորները փորձում են իշխող ուժի համար բարձր սոցհարցումների ու վարկանիշների թվեր «խփել» եւ ներկայացնել ժողովրդին, իրենց ներքին հարցումներն ու քարոզարշավի ընթացքն այլ պատկեր են արձանագրում: Մեր աղբյուրի խոսքով՝ շատերը վերջին օրերին անգամ շտաբ չեն գալիս, չկա նախկին էնտուզիազմը, քանի որ, չնայած գործադրած տիտանական ջանքերին եւ պտտվող գումարներին, արդյունքը տեսանելի չէ, եւ անգամ բուկլետ բաժանելու գործում լուրջ խոչընդոտների են հանդիպում:

Իշխանական մեր աղբյուրներից տեղեկացանք նաեւ, որ Նիկոլ Փաշինյանն էլ «նեղ կռուգում» անկեղծացել է, որ վիճակն իրականում բարդ է, հատկապես՝ մայրաքաղաքում, քանի որ երեւանցիները տոտալ մերժում են իրենց: Չնայած քարոզարշավների ժամանակ շրջիկ խմբեր են տանում՝ «մասսովկա» ցուցադրելու, բայց իրենք տեսնում են, որ պատահական աջակիցներն ու համախոհները մեծ թիվ չեն կազմում: Սրանով է պայմանավորված նաեւ այն, որ Փաշինյանը նյարդային վիճակում է, չի կարողանում տեսախցիկների առաջ իրեն զսպել: Դա է պատճառը, որ հույսը դրել է քրեական մեթոդների վրա՝ տասնյակներով մարդ են բռնում, հասել են ընդդիմադիր ուժերի ամենաակտիվ դերակատարներին՝ ընտրացուցակներից են մարդ բռնում, շարքային մարդկանց են բերման ենթարկում, ձերբակալում ու կալանավորում, որ վախի մթնոլորտով, քաղաքական ուժերի աշխատանքը կազմալուծելով ինչ-որ արդյունքի հասնեն: Մյուս կողմից՝ իրավիճակը բարդանում է նաեւ Ռուսաստանի կողմից հայ տնտեսվարողների նկատմամբ կիրառվող սանկցիաների պատճառով:

Սակայն նկատենք, որ վերջին օրերին բավականին փոխվել է Փաշինյանի հռետորաբանությունը, նա մեղմացրել է գռեհիկ, կոշտ բառապաշարն ընդդիմադիր մրցակիցների եւ իրեն քննադատողների նկատմամբ: Նրա թիմից ասում են, որ ներքին քննարկումներում ՔՊ-ականների ճնշող մեծամասնությունը համոզված է, որ այդ մարտավարությունից իրենք մեծ հաշվով չեն շահում, գուցե իշխանական ցածր էլեկտորատի համար հաճելի է այդ խոսույթը, սակայն դրանք շատ վատ են ազդում չկողմնորոշվածների ու քիչ թե շատ գրագետ խավի վրա, որոնք, տեսնելով Փաշինյանի անկառավարելի պահվածքն ու լսելով սպառնալից հայտարարությունները, հակվում են նրան, որ գնան ընտրության եւ մերժեն անադեկվատ ղեկավարին:

Սակայն երեկվանից իրավապահները տոտալ հարձակումներ սկսեցին ընդդիմադիրների դեմ, առավոտյան փողերի լվացման մեղադրանքով ձերբակալեցին «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Ալիկ Ալեքսանյանին, խուզարկություններ իրականացրին Դաշնակցության Աշտարակի շտաբներում, ՀՅԴ-ական պատգամավոր Աշոտ Սիմոնյանի բնակարանում:

Ի դեպ, արդեն քանի օր է՝ Փաշինյանի կրծքին փակցված միկրոֆոնն էլ չկա, հավանաբար հրաժարվել է, որ կիքսերն ուղիղ եթեր չգնան: ՔՊ-ի տեղն այնքան նեղ է, որ կենաց-մահու կռիվ են տալիս յուրաքանչյուր ձայնի համար, օրինակ, խմածության պատճառով վարորդական իրավունքից զրկվածների վերաբերյալ աղմկահարույց որոշում կայացվեց, չնայած մարդիկ շատ քննադատեցին այդ մոտեցումը: Իշխանությունը բոլոր ճակատներով աշխատում է, մարդկանց շահագրգռում, տեռորի ենթարկում, վախեցնում, քծնում՝ միայն թե վերարտադրվի:

Ի դեպ, վերջին շրջանում տաքսու վարորդներից դժգոհություններ ենք լսել, որ ՔՊ-ականների ինչ-որ շրջիկ խմբեր են «աշխատում» իրենց վրա՝ պատվիրում եւ օգտվում են գնահատման համակարգով աշխատող տաքսիներից, խոսեցնում են վարորդներին, եթե պարզվում է, որ վարորդն իշխանական չէ, մեքենայից իջնելուց հետո նրանց ցածր են գնահատում՝ կարեւոր չէ, թե վարորդն ինչպես է վարել: Այսպիսով՝ փորձում են պատժել իշխանություններին մերժող վարորդներին, նվազեցնել նրանց ռեյտինգը եւ ամենակարեւորը՝ փակել բերանները: Մեր զրուցակից վարորդի համոզմամբ, ամեն հնարավոր հարթակ փորձում են օգտագործել՝ կանխելու հակաիշխանական քարոզչությունը, որ վարորդներն ավելի զգուշավոր դառնան եւ խուսափեն ուղեւորների հետ ընտրական թեմաներով զրույցներ վարելուց, իսկ տաքսու վարորդները մարդկանց հետ ամենաշատը շփվող խավն են:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՄԵԿՈՒՍԱՑՆԵԼ ՈՒ ՇԱՐՔԻՑ ՀԱՆԵԼ ՄԵՐ ԱՄԵՆԱՈՒԺԵՂ, ԱՄԵՆԱՎԱՌ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

*«Հրապարակի» զրուցակիցն «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորության թեկնածու **Արեգա Հովսեփյանն** է:*

Արա ԱԼՈՅԱՆ

- Ընտրություններին հաշված օրեր են մնացել, ավետարանական խոսույթով ասած՝ «չարչարանաց շաբաթվա» մեջ ենք: Այս հանգրվանում ի՞նչ կարեւոր եզրահանգումների եք եկել, հանրային հանդիպումներում ի՞նչ կարեւոր ուղերձներ եք ստացել ընտրողներից, որոնք ինչ-որ առումով փոխել են ձեր մարտավարությունը:

- Իրապես, վերջին շաբաթը մեծագույն փորձությունների շաբաթ է: Այս ամբողջ ընթացքում մենք փորձել ենք հասկանալ, թե, ի վերջո, որն է հայ ժողովրդի ցանկությունը, նպատակը, Հայաստանի ապագայի տեսլականը: Եվ եկել ենք այն եզրակացության, որ հայ ժողովուրդը փոփոխություն է ուզում իր կյանքում: Գուցե ինչ-որ մաս դեռ չի կողմնորոշվել, գուցե ինչ-որ հատված չի վստահում՝ ունենալով վատ փորձ 2018 թվականից, բայց այն, որ հայ ժողովուրդը փոփոխություն է ուզում՝ միանշանակ է: Մենք համոզված ենք, որ այդ փոփոխությունը կարող է բերել նոր առաջնորդը՝ առանց քաղաքական սխալների բեռի, առանց թույլ տված քաղաքական սխալներ անողների իրավահաջորդ լինելու: Եվ այդ ուժն «Ուժեղ Հայաստանն» է:

- Արցախի ու արցախահայության մասին Փաշինյանի սպառնալից հռետորաբանությունը, ատելության խոսքը Ձեզ համար առանձնապես զգայուն է՝ հաշվի առնելով, որ Արցախը Ձեր ծննդավայրն է: Բայց նա «պատերազմ է հայտարարել» ամբողջ հայ ժողովրդին՝ ինքնությունից, պատմական հիշողությունից մինչեւ հայոց պետականության հենասյուներ: Մի՞թե այլ պատճառ է պետք՝ չարիքի այս իշխանությանը հեռացնելու համար:

- Քաջ գիտակցելով, որ հայ ժողովրդին միավորող հենասյուներն են Արցախը, Սփյուռքը եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, մշակել են հստակ ռազմավարություն՝ երեքն էլ կործանելու: Այսօր հազարամյա հայկական Արցախում հայեր չեն ապրում, մեր սփյուռքի հետ կապը ոչ միայն լիովին կտրվել է, այլ նաեւ միտումնավոր կերպով պառակտում է մտցվել ինչպես Հայաստան-Սփյուռք հարաբերություններում, այնպես էլ՝ հենց սփյուռքի ներսում: Վերջին հենասյունը՝ ՀԱԵ-ն պայքարում է՝ ստանալով հավատավոր ժողովրդի աջակցությունը: Համոզված եմ, որ այս պայքարում փոքրիկ խմբակը պարտվելու է, քանի որ Եկեղեցին վեր է ամեն ինչից: Վերջերս էլ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ Ալլահշուքյուր Փաշազադեի տեղակալը հայտարարել էր, որ «խաղաղության գործընթացի» տրամաբանության մեջ Հայաստանում, իբր, պետք է վերականգնվի 500 ադրբեջանական մզկիթ: Սա լիովին տեղավորվում է Ադրբեջանի ամենաբարձր մակարդակով արած հայտարարությունների մեջ, ըստ որի՝ ադրբեջանցիները պարտվելու է, քանի որ Եկեղեցին վեր է ամեն ինչից: Վերջերս էլ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ Ալլահշուքյուր Փաշազադեի տեղակալը հայտարարել էր, որ «խաղաղության գործընթացի» տրամաբանության մեջ Հայաստանում, իբր, պետք է վերականգնվի 500 ադրբեջանական մզկիթ: Սա լիովին տեղավորվում է Ադրբեջանի ամենաբարձր մակարդակով արած հայտարարությունների մեջ, ըստ որի՝ ադրբեջանցիները պետք է բնակվեն Հայաստանում: Հակառակ դեպքում, այդ ովքե՞ր պիտի Հայաստանում գնան մզկիթներ: Համոզված եմ, որ հայ ժողովուրդն իր խոսքն ասելու է հունիսի 7-ին՝ ընտրությունների գնալով:

- Ճիշտ են նկատել՝ Փաշինյանն աղքատներին հանել է հարուստների դեմ, ներկայներին՝ նախկիններին, թույլերին՝ ուժեղների, հայաստանցիներին՝ արցախցիների եւ այլն: Կարճ ասած՝ պառակտում է հայ ժողովրդին: Ինչ է, ժողովուրդն արժանի՞ է այս իշխանությանը: Իսկ ե՞րբ եւ ինչպե՞ս է իշխանությունն արժանի լինելու ուժեղ եւ արժանապատիվ հայ ժողովրդին, եթե վեր կանգնենք նախընտրական խոստումներից:

- Այսօրվա իշխանությունները պառակտումների մեծ վարպետ են: Սա անհերքելի է: Այս ութ տարիները մեր հայ ժողովրդի Գողգոթայի ճանապարհն են կարծես, որը մենք պետք է անցնենք բոլորս միասին: Այն ծանրագույն օրերը, որ բաժին են հասել հայ ժողովրդին այս ընթացքում, ամենեւին էլ պատահականություն չեն: Վեր ենք հառնելու, ոտքի ենք կանգնելու: «Ուժեղ Հայաստանն» այլընտրանք չունի:

- Շատ է խոսվում ոչ միայն իշխանափոխության, այլեւ ընդդիմափոխության (բառի որակական իմաստով) մասին: Այս երկուսում որտե՞ղ եք հատկապես տեսնում ձեր քաղաքական թիմի դերակատարումը, թե՞ սրանք մեկ ամբողջություն են:

- Հայաստանին պետք են փոփոխություններ: Մենք չենք կարող գտնվել միեւնույն շրջափուլի մեջ եւ պահանջել փոփոխություններ: Մեր կուսակցությունը գնում է բացարձակ հաղթանակի: Մենք չենք մտել քաղաքականություն, որպեսզի քաղաքական գործիչ դառնանք, այլ ունենք շատ հստակ նպատակ՝ Հայաստանն ուժեղ դարձնելու, եւ դրա համար՝ որպես առաջնային քայլ, պետք է լինել կառավարություն, ունենալ համապատասխան լծակները:

- Հատկապես զանգվածային բնույթ են կրում իշխանությունների կողմից «Ուժեղ Հայաստանի» ներկայացուցիչների դեմ քաղաքական հետապնդումները՝ ձերբակալություններ, կալանքներ: Վերջին ամենաթարմ դեպքն Ալիկ Ալեքսանյանն էր՝ ինչո՞վ է պայմանավորված նրա ձերբակալությունը:

- «Ուժեղ Հայաստան» կուսակցության դեմ իրականացվում են ամենալայնածավալ բռնաճնշումները: Դա ցույց է տալիս, որ իշխանությունները վախենում են «Ուժեղ Հայաստանից», եւ Ալիկ Ալեքսանյանի ձերբակալությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ այս իշխանությունների վախի ցուցադրում, որովհետեւ նրանք ակնհայտ տեսնում են, թե ինչ հեղինակություն ունի Ալիկ Ալեքսանյանը, թե ինչքան է ժողովուրդը սիրում նրան, եւ փորձում են այսպիսով մեկուսացնել ու շարքերից հանել մեր ամենաուժեղ, ամենավառ ներկայացուցիչներից մեկին: Սակայն այս իշխանությունները հերթական անգամ սխալվել են իրենց հաշվարկներում, որովհետեւ մենք ավելի ենք ուժեղանում այս բռնաճնշումներից եւ հունիսի 3-ին մենք ցույց ենք տալու մեր ամբողջ ուժը՝ մեր բոլոր համակիրների հետ, մեր ուժեղ հայ ժողովրդի հետ՝ հավաքվելով Հանրապետության հրապարակում:

ՈՎ ՄՏԱԾՈՒՄ Է, ՈՐ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՎ ՀԱՄԱԿՐԱՆՔ Է ՇԱՀՈՒՄ, ՉԱՐԱՉԱՐ ՍԽԱԼՎՈՒՄ Է

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հանրային հեռուստաընկերությունն ընտրություններին ընդառաջ բանավեճերի շարք է սկսել: Այս տարվա բանավեճերն աննախադեպ են եւ տարբերվում են նախորդ տարիների բանավեճերից: Եթերից հնչող հայհոյանքը, ժարգոնային խոսքը, միմյանց անդրավարտիքների մասին խոսելն ու իրար վրա մատ թափ տալը հայաստանյան արդի քաղաքական կյանքում, կարծես, նորմալիզացվել են: Անգամ երկրի վարչապետն է խոսում փողոցային բառապաշարով, մարդկանց հայհոյում, վիրավորում: Սակայն հասարակության կիրթ զանգվածը դեռ շարունակում է զարմանալ եւ տարակուսանք հայտնել այն իրողության համար, որ քաղաքական խոսքն իջել է շրիշակի մակարդակի: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է լեզվաբան, Մանկավարժական համալսարանի հեռուստալրագրության ամբիոնի վարիչ **Լեւոն Գալստյանի** հետ:

- Քաղաքական խոսքի մշակույթն ինչպիսի՞ն պետք է լինի: Քաղաքակիրթ երկրներում հեռուստաեթերից հայհոյելը, վիրավորելը, փողոցային բառապաշարով ուղերձներ հղելը, միմյանց ներքնազգեստների մասին խոսելը, իրար անձնական կյանք մտնելը կարո՞ղ են համարվել ընդունելի եւ նորմալ երեւույթ, թե՞ սրանք, այնուամենայնիվ, կատեգորիկ մերժելի երեւույթներ են:

- Նախ, ուզում եմ մեր զրույցը սկսել՝ հղում անելով «Լեզվի մասին» օրենքի պահանջներին: Կա մի այսպիսի պահանջ, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են պահպանել լեզվի անաղարտությունը: Դա օրենսդրական պահանջ է, որը շատ հստակ է ձեւակերպված: Մանավանդ հրապարակային խոսքում, երբ խոսքն ուղղված է բազմությանը, բոլորը պարտավոր են խոսել կոռեկտ: Ի դեպ, դա հյուրի կամ հյուրերի պարտականությունն է, այլ ոչ թե լրագրողի: Հյուրը պաշտոնական խոսքի կրող է: Հաճախ մարդիկ «պաշտոնական» բառը շփոթում եւ կապում են միայն պաշտոնյաների հետ, սակայն դա այդպես չէ: Ցանկացած ոք, ով խոսում է հանրության համար, անկախ այն բանից, թե ինչ մասնագիտություն ունի. պատգամավոր է, թե ուղղակի քաղաքացի, պարտավոր է հետեւել իր խոսքին՝ լեզվական կանոնները պահպանելով: Եթերից հնչող գռեհկաբանությունները, հայհոյանքը քննարկելն անգամ անհարմար է: Հայհոյանքն ու վիրավորանքը եթերից պետք է բացառել:

- Երբվանի՞ց քաղաքական խոսքի մշակույթն իջավ այս մակարդակին: Օրինակ, ավագ սերնդի՝ Գերագույն խորհրդի պատգամավորներն ունեին բավականին գեղեցիկ եւ գրագետ խոսք, ինչը չենք կարող ասել մերօրյա իշխանավորների մասին:

- Յուրաքանչյուր ոք կարող է թույլ տալ լեզվական սխալներ: Ես իմ ուսանողներին էլ ասում եմ, որ լեզվական սխալները եւս լեզվի մաս են կազմում, սակայն նայած թե խոսքն ինչ սխալների մասին է: Կան սխալներ, որոնք ընդունելի չեն, սակայն հասկանալի են, բայց երբ եթերից գիտակցված հայհոյում են, իրար չլսելով վիրավորում են միմյանց, դա անընդունելի է: Իբրեւ թե դրանով փորձում են անմիջականության պատրանք ստեղծել: Այս ամենը մերժելի է ու դատապարտելի: Այս երեւույթը, ցավոք սրտի, վերջին տարիներին է ահագնացել, եւ դա փաստ է: Վերջին տարիներին հրապարակային խոսքի նշաձողը լրիվ իջեցրել են: Իշխանության ներկայացուցիչները հատկապես պարտավոր են խստիվ հետեւել համապատասխան կանոններին: Նրանց վարքագիծը, այդ թվում՝ լեզվական վարքագիծը, ուղղակիորեն ազդում է մարդկանց վրա:

- Ինչպե՞ս հետեւեն, եթե իրենք են կնոջ հետ սեռական հարաբերություն ունենալը «դոմփել» անվանում, եթե երկրի վարչապետն ասում է՝ «կզացնելու եմ», «շինելու եմ», «սատկացնելու եմ», «ինչո՞ւ ես կենդանի մնացել», եւ այսպես շարունակ:

- Սրանք՝ բոլորը, խիստ մերժելի եւ վատ երեւույթներ են, որոնք անպայման պետք է մերժել: Պատանիների, մանուկների լեզվագիտակցության վրա այս ամենը շատ է ազդում: Ի վերջո, երեխաներն ուսումնառության տարիներին սովորում են քերականական կանոններ ու բարեկիրթ խոսք, իսկ գռեհիկ խոսքը հակասություն է առաջացնում: Գռեհկաբանությունը նման քայլերով լեգիտիմացվում է….

- Ինչպիսի՞ն պետք է լինի գրագետ քաղաքական բանավեճը, որպեսզի հասարակությունը կարողանա առանց նյարդային ջղաձգումների դիտել այն:

- Բանավեճը կարող է լինել սուր, կարող են դարձվածքներ ու տարբեր արտահայտություններ գործածվել, որոնք կլինեն պատկերավոր եւ ասելիքը կդարձնեն առավել ազդեցիկ, սակայն պետք է բացառել հայհոյանքը, ժարգոնը եւ գռեհիկ խոսքը: Եթերից ոչ ոք չունի նման ձեւով խոսելու իրավունք:

- Իսկ Դուք հետեւո՞ւմ եք Հ1-ի հայտնի բանավեճերին եւ ի՞նչ կարծիք ունեք դրանց մասին:

- Մի պահ մի քանի դրվագ դիտեցի, կարծիքս բացասական է: Շատ վատ կարծիք ձեւավորեցի: Մեր ժողովուրդը հատուկ վերաբերմունք ու ակնածանք ունի բարեկիրթ խոսքի նկատմամբ: Նրանք, ովքեր մտածում են, որ փողոցային բառապաշարով շահում են մարդկանց համակրանքը, չարաչար սխալվում են: Տեղի է ունենում լրիվ հակառակը: Մտածում են, որ լեզվական ամենաթողությամբ կարող են անմիջական երեւալ, բայց դա անպատկառություն է: Մարդը կարող է լինել բարբառախոս եւ դժվարանալ խոսել գրական հայերենով, ինչը միանգամայն նորմալ երեւույթ է, սակայն հասարակության առաջ հանդես գալ հայհոյանքներով եւ գռեհիկ խոսքով, անթույլատրելի է:

ԶՐՈՒՅՑ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ, ՉԷ՝ ԾԱՂՐ

Հունիսի 1-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը շնորհավորել էր Նիկոլ Փաշինյանին՝ ծննդյան օրվա առիթով, եւ նույն օրը նրա հետ հեռախոսազրույց ունեցել մայիսի 29-ին Աստանայում կայացած ԵԱՏՄ բարձրագույն խորհրդի նիստի արդյունքների թեմայով: ՔՊ-ականներն ակտիվորեն տարածում են այս երկու տեղեկությունն էլ՝ փորձելով ցույց տալ, որ Ռուսաստանի եւ այդ երկրի նախագահի հետ հարաբերությունները վերջնականապես եւ անդառնալիորեն կորսված չեն, որ հունիսի 7-ից հետո Ռուսաստանի հետ հարաբերությունները կլինեն այնպիսին, ինչպիսին եղել էին մինչեւ մայիսի սկիզբը, մինչեւ Հայաստանում Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովը, որից հետո Ռուսաստանը Հայաստանի առաջ կողմնորոշվելու կտրուկ պահանջ դրեց՝ ընտրություն կատարել ԵՄ-ի եւ ԵԱՏՄ-ի միջեւ: Բայց նույն պահին, երբ Վլադիմիր Պուտինը շնորհավորում էր Նիկոլ Փաշինյանին, «Ռոսսելխոզնադզորը» հայտնեց, որ Հայաստանից ձկան արտահանման հավաստագրումը դադարեցվում է, որ միայն երկու ընկերություն կկարողանա ձուկ արտահանել Ռուսաստան: Նույն օրը նույն կազմակերպությունն արգելք սահմանեց Հայաստանի մրգերի եւ հատապտուղների արտահանման վրա: Ի՞նչ է ստացվում. Ռուսաստանը՝ հանձին նախագահի, ջերմ ընկերական հարաբերություններ ունի Նիկոլ Փաշինյանի հետ, բայց թշնամություն է անում հայ արտադրողների եւ ներմուծողների նկատմամբ, մինչդեռ իրականում հայտարարում են, որ ճիշտ հակառակն է՝ հայ ժողովուրդն է իրենց բարեկամը, իսկ իշխանությունները սխալ քաղաքականություն են վարում: Ո՞րն է հիմա ճիշտը, ինչո՞ւ է Պուտինը շնորհավորում Փաշինյանին, բայց պատժում հայ գյուղացիներին, արտադրողներին եւ արտահանողներին:

Նախ սկսենք նրանից, որ, շատերի կարծիքով, Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ ներկա թշնամությունը խաղ է, բեմականացում, որի իմաստն այն է, որ ընտրություններում Փաշինյանը ստանա Արեւմուտքի աջակցությունը. ԵՄ-ն եւ ԱՄՆ-ն, որոնց ձեռքին է գտնվում ընտրություններն օրինականացնելու կնիքը, աչք փակեն Փաշինյանի ընտրակեղծարարության, ընդդիմությանը հալածելու եւ ճնշելու գործողությունների վրա՝ ասելով, որ եթե դա արվում է հանուն ԵՄ-ի հետ բարեկամության, որ եթե կեղծիքն ու բռնությունը ուղղված են պրոռուսական ուժերի դեմ, դա արդարացված է, կեղծված ընտրությունը՝ օրինական: Ընտրություններից հետո երբ Փաշինյանը ստանա իշխանության «յառլիկը»՝ հավաստագիրը, որ ինքն օրինական ընտրված վարչապետ է եւ իրավունք ունի եւս հինգ տարով կառավարել Հայաստանը, նա նորից կնետվի Ռուսաստանի եւ Պուտինի գիրկը եւ նրան հավերժական սեր ու հնազանդություն կխոստանա, եւ ամեն ինչ կվերադառնա նախկինին, Ռուսաստանը կչեղարկի բոլոր սահմանափակումներն ու արգելքները: Որքան էլ որ սրա մեջ ինչ-որ տրամաբանություն լինի՝ այն իմաստով, որ Փաշինյանը չունի սկզբունքներ եւ մեկ անգամ չէ, որ փոխել է իր դիրքորոշումը, այն չի համապատասխանում իրականությանը, թեկուզ այն պարզ պատճառով, որ նա Արեւմուտքից իշխելու հավաստագիր կստանար նաեւ առանց Ռուսաստանի հետ կոշտ հակադրության մեջ մտնելու, այնպես չէ, որ ԵՄ-ն կամ ԱՄՆ-ն Հայաստանում ուզում էին ուրիշ մեկին նշանակել վարչապետ, բայց Փաշինյանը հակառուսական բեմականացում կազմակերպեց եւ չեղարկեց իր հեռացման սցենարը: 2018 թվականին Հայաստանում տեղի ունեցածը դասական գունավոր հեղափոխություն էր, որի կազմակերպիչն ու շահառուն Արեւմուտքն էր, Փաշինյանը 8 տարի անդավաճան ծառայել է իր արեւմտյան տերերին, չնայած նրան թույլ է տրվել շատ կտրուկ հակառուսական քայլեր չանել, որ կարողանա Ռուսաստանի վրա փող աշխատել, որ իրենցից փող չուզի կամ շատ չուզի: Հիմա էլ են նույնն ասում՝աշխատիր կապերը չխզել Ռուսաստանի հետ, մենք քեզ ու քո ռեժիմը պահելու փող չունենք: Դրա համար է Փաշինյանն անընդհատ կրկնում, որ ԵԱՏՄ-ից դուրս գալու խնդիր դրված չէ, քանի դեռ ԵՄ-ն պատրաստ չէ Հայաստանին վերցնել իր խնամակալության տակ:

Ինչ վերաբերում է Վլադիմիր Պուտինի շնորհավորելուն: Նախ՝ դա ծաղր է. երբ դու մեկի հանդեպ թշնամական քայլ ես անում ու հետո նրան շնորհավորում ես ծննդյան տոնի առթիվ, դա բացահայտ ծաղր է՝ հրապարակային: Որովհետեւ չի կարելի մարդու հացը ձեռքից առնել, նրան կտրել սնվելու եւ ապրուստի միջոցներից եւ միաժամանակ ծնունդը շնորհավորել ու բարեմաղթանքներ ասել: Սա ճիշտ է ինչպես մարդկային, այնպես էլ միջպետական հարաբերություններում: Նիկոլ Փաշինյանի փոխարեն որեւէ արժանապատիվ մեկը կասեր, որ շնորհավորանքի փոխարեն ինքը կգերադասեր, եթե Ռուսաստանը վերացներ Հայաստանի նկատմամբ սահմանված արգելքներն ու սահմանափակումները: Բնական է, որ Փաշինյանը նման բան չի ասի:

Երկրորդ. Վլադիմիր Պուտինը Փաշինյանին շնորհավորելով եւ նրա հետ հեռախոսային զրույց ունենալով ուզում է ցույց տալ, որ Ռուսաստանը նրա նկատմամբ որեւէ անձնական թշնամություն չունի: Եթե Փաշինյանը հանգիստ եւ անցնցում հանձնի, իշխանությունը կարող է

նույնիսկ Մոսկվայում քաղաքական ապաստան ստանալ Բաշար ալ Ասադի, Վիկտոր Յանուկովիչի եւ էլի նման մի քանիսի պես: Աշխարհի պատմությունը ցույց է տվել, որ Արեւմուտքն իրեն ծառայած բռնապետերին, մաշվելուց եւ գործածության ժամկետը կորցնելուց հետո, ուղղակի ուտիլիզացնում է որպես անպետք ապրանք, իսկ Ռուսաստանը կյանքի եւ ապահովության իրավունք է տալիս:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

«ԾԻՐԱՆԻ ԱՐԱՂ ԿՔԱՇԵՆՔ»

Ախկինների օրոք գեներալ, Նիկոլի օրոք ՔՊ-ական պատգամավոր Գագիկ Մելքոնյանը հերթական «առողջ» մտքերն է հայտնել «Հրապարակ»-ի լրագրողի հետ զրույցում: Հերթական անգամ սխալ է հանել Ռուսաստանը: Ու հերթական անգամ դեպի Ռուսաստան գյուղմթերքի արտահանման քաղաքական խնդրի լուծում է առաջարկել: Այն է՝ «Մեր մոտ ծիրանը կէժանանա, ծիրանի արաղ կքաշենք», ու, բնականաբար, հարբեցողությամբ կզբաղվեն: Հենց այսպիսին է լինում իսկական նիկոլական «հայրենասերը», որը, իր խելքով, մտածում է երկրի բնակիչների մասին, որոնք էժան գնով ծիրան կառնեն ու, հնարավորության դեպքում, օղի կարտադրեն: Սա խիստ բնական է, որովհետեւ, եթե իր առաջնորդը խոզի խորոված է սիրում, ապա ի՞նչ խորոված առանց արաղի: Դե, իսկ ծիրան աճեցնողի հերն էլ անիծած: Եվ այս մարդը գեներալ է, խորհրդարանի պատգամավոր...

Բայց այնպես չէ, որ ՔՊ-ական շրջանակի մյուս դեմքերը նրանից ինչ-որ բանով տարբերվում են: Որպեսզի տարբերվեին, անհրաժեշտ էր ունենալ այնպիսի առաջնորդ, որ օրինակ կծառայեր իրենց, ու, ասենք, գեներալի նման արաղասեր անձինք բացառություն կլինեին: Բայց քանի որ իրենց առաջնորդը Նիկոլն է, դրա մասին ավելի լավ է մոռանանք: Մի անձ, որը մի դեպքում հայտարարում է, որ իրենք կամ, ավելի ճիշտ՝ ինքը (քանի որ կառավարությունն ինքն է) սառեցրել է Հայաստանի անդամությունը ՀԱՊԿ-ին, չնայած ՀԱՊԿ-ի կանոնադրությունում առկա չէ անդամակցության կասեցման որեւէ դրույթ: Մեկ այլ դեպքում էլ հայտարարում է, թե Ռուսաստանը հիմքեր չունի գազը թանկացնելու, քանի որ կա գործող պայմանագիր: Բայց եթե դու խախտում ես կանոնադրությունը, այսինքն՝ այն պայմանագիրը, որով դարձել ես որեւէ կառույցի անդամ, ապա ինչո՞ւ չի կարող մեկ այլ պայմանագրում մյուս կողմն ընդամենը չեղարկել այն: Ենթադրում եմ, որ երկրորդ պնդումն անելու պահին մոռացել էր, թե ինչ էր ասում նախկինում ՀԱՊԿ-ի առումով, եթե, իհարկե, գիտակցում է վերն ասվածը:

Շարունակենք: ՌԴ-ի հետ իր՝ որպես կառավարության, հարաբերությունները փչացնելը համարում է դրական երեւույթ, ինչն իր առումով եւս նորմալ է. հիշենք պարտությամբ հպարտանալու մասին իր հայտարարությունը: «Այդ հարաբերությունները բաց են, անկեղծ, ոչ մի մութ անկյուն չկա»,- ասում է նա: Այսինքն, ԵԱՏՄ-ում ակտիվ գործելու ու այդ կառույցի ընձեռած հնարավորություններից օգտվելու հետ մեկտեղ Եվրամիության անդամ դառնալու գործընթացը (հիշենք համապատասխան օրենքը), փաստորեն, խոսում է անկեղծ լինելու մտադրության մասին: Հետաքրքիր է, գյուղմթերքի արտահանման կասեցման հետեւանքով դրա փչանալու առումով փող տվող Նիկոլը եվրոպական որ առեւտրական ցանցերի հետ է պայմանավորվելու, որպեսզի ՌԴ գնացող՝ երկու ամսից հասունացող դեղձը, ասենք, փոխանցի նրանց: Թե՞ այդ դեղձի համար եւս ինքը փող է տալու գյուղացիներին: Թեեւ, ի տարբերություն ելակ եւ ջերմոցներում լոլիկ, ծաղիկ (եւ այլն) աճեցնող մի քանի հազար ֆերմերների, դեղձի սեզոնի դեպքում ինքը գործ է ունենալու տասնյակ հազարավոր շարքային գյուղացիների հետ: Թե ինչպես է նրանց եւս փող տալու՝ վստահաբար չգիտի թե՞ ինքը եւ թե՞ իրեն հովանավորող Եվրամիության չինովնիկները:

Հաշվի առնելով, որ տվյալ հոդվածում շոշափվեց ՀՀ-ՌԴ պետական հարաբերությունների տրանսֆորմացիոն բնույթը, չեմ կարող աչքաթող անել մարդկային հարաբերությունների առումով ՔՊ-ականներին բնորոշ վարքագիծը: Եվ այսպես, վարչապետի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող Հարությունյան Արայիկն իր ֆեյսբուքյան էջում տեղադրել է «Հայաստան» դաշինքի անդամ Աննա Գրիգորյանի՝ 2018-ի նախընտրական հարցազրույցից մի հատված: Աննան, որպես այն ժամանակ «Ելք»-ի պատգամավորության թեկնածու, ասում է, թե Արցախը դադարել է բանակցային կողմ լինելուց Ռոբերտ Քոչարյանի օրոք: Չբավարարվելով դրանով՝ տիկնոջը վիրավորում է «քըխ» ձայնարկությամբ: Ոնց հասկանում եմ, վերը նշված անձը, բուհ ավարտած լինելով հանդերձ, տեղյակ չէ այս արտահայտությանը՝ «Իսկ ովքե՞ր են դատավորները»: Որովհետեւ, եթե տեղյակ լիներ, կիմանար, որ իրեն պաշտոնի նշանակողն իր այսօրվա մտածողությամբ, եթե կիրառենք նույն տրամաբանությունը նրա հանդեպ, բազմիցս է արժանի «քըխ»-ի: Կարծում եմ, որ ընդամենը մեկ օրինակը՝ «Արցախը Հայաստան է, եւ վերջ»-ը, բավարար է դա հաստատելու համար: Վերջինս էլ, որպեսզի արդարացնի իր, թեեւ ուրիշի հասցեին ասված «քըխ» լինելը, անընդհատ ասում է, թե այն ժամանակ չէր գիտակցում, սխալվել էր: Եվ եթե 2018-ին Աննան 30 տարեկան էլ չկար ու կարող էր ընկնել մանիպուլյատոր Նիկոլի ազդեցության ներքո, ապա իր առաջնորդն իբրեւ թե սխալվելիս 44-45 տարեկան հասուն անձնավորություն էր եւ փորձառու քաղաքական գործիչ: Ինչպես երեւում է, այդ հանգամանքը չգիտակցող անձը դրդում է մարդկանց, որպեսզի վերջիններս համոզվեն, որ իզուր չէր իր անվան հետ համացանցում ասոցացվում ինչ-որ բանջարեղենի նկար:

ՀԳ. *Ի դեպ, վարչապետի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող անձին վաղուց եմ ճանաչում: Եղել ենք ՀԿ-ական գործընկերներ, բայց ինքն այն մարդը չէր, որի հետ ընկերություն անելու ցանկություն կառաջանար:*

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻ

ԻՆՔՆ ԻՐ ՏՎԱԾ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ ՉԻ ԿԱՏԱՐԵԼ, ԲՆԱԿԱՆԱԲԱՐ, ՍԱ ԷԼ ՉԻ ԱՆԵԼՈՒ

Ամենայն հայոց կաթողիկոսն օրերս հանդես եկավ ուղերձով. «Հունիսի 7-ին՝ Սուրբ Էջմիածնի տոնի նվիրական օրը, մեր երկրում տեղի են ունենալու խորհրդարանական ընտրությունները: Հայրապետիս հորդորն է ամենքիդ՝ անխտիր առաջիկա կիրակի մասնակցել ընտրություններին՝ ազգի եւ հայրենիքի շահերի բարձր գիտակցությամբ, լուսավոր գալիքի տեսիլքով եւ սերունդների նկատմամբ պատասխանատվությամբ, որպեսզի մեր երկրում գերակայի օրենքը, հարգվեն մարդու իրավունքներն ու արժանապատվությունը, տիրապետեն արդարությունն ու ճշմարտությունը, սերն ու համերաշխությունը եւ փոխադարձ հարգանքը՝ «դեն գցելով ամեն չարություն, ամեն նենգություն, կեղծավորություններ, նախանձ եւ ամեն չարախոսություն»:

«Հրապարակն» այս կոչի եւ այլ հարցերի մասին զրուցել է Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցու հոգեւոր հովիվ **Տեր Վրթանես քահանա Բաղալյանի** հետ:

- Ինչո՞ւ Վեհափառը նման կոչով հանդես եկավ:

- Կոչը պայմանավորված է այն հանգամանքով, որ հասարակության ամբողջության կարծիքն արտահայտեն իշխանությունները, այսինքն, Վեհափառ հայրապետն ակնկալում է լեգիտիմ իշխանություն ունենալ, որոնք կընտրվեն ազգի ընտրողների մեծամասնության քվեով եւ ոչ թե ազգի հիմնական մասը հուսահատության մեջ լինի՝ չմասնակցի ընտրություններին, եւ այն փոքրիկ խմբավորումները, որ շատ անգամ նաեւ ագրեսիվ են, իրենք դառնան իշխանություններ եւ չարտահայտեն ազգի մեծամասնության դիրքորոշումը:

- Մտավախություն չկա՞, որ իշխանությունները սա կարող են ներկայացնել որպես քաղաքականությանը խառնվելու հերթական փորձ:

- Նման կոչով հանդես են եկել նաեւ որոշ եպիսկոպոսներ, որ հասարակությանը կոչ են անում՝ մասնակցություն ունենալ ընտրություններին: Չնայած իրենց հայտարարությունները՝ ես տեսել եմ, շատ չեզոք են, չեն առաջարկում որեւէ կողմից մասնակցել, ուղղակի հորդորում են՝ իրենց քաղաքացիական պարտքը կատարել: Այդ թվում ես եմ հորդորում, որ մեր քաղաքացիներն ակտիվ լինեն, գնան, իրենց քաղաքացիական պարտքը կատարեն:

- Այսինքն, խնդիրն այն է, որ այս ընտրությունները ոչ թե հերթական, այլ գոյաբանական ընտրություններ են:

- Ինքնության հարցն է լուծվում, որովհետեւ կարող է ֆիզիկական գոյություն լինել, բայց մենք մեր ինքնությունը կորցնենք, այսինքն՝ ինքնության կորուստ կարող ենք ունենալ մեր հայրենիքում եւ նաեւ տեսնում ենք, որ նախընտրական փուլում ոմանք իրենց ծրագրերում ներառել են հակաեկեղեցական կետեր՝ բարենորոգման անվան տակ, հակաեկեղեցական, հակասահմանադրական կետեր կան, քաղաքացիները նաեւ պիտի ուշադիր լինեն, որ այդպիսիներին ձայն չտան:

- Նիկոլ Փաշինյանն իր հակաեկեղեցական քաղաքականությունը պայմանավորում էր իբրեւ թե Եկեղեցու կողմից իրենց քաղաքականությանը միջամտելու հանգամանքով, սակայն նրա ընտրարշավին մասնակցում են նաեւ կարգալույծները եւ այլք:

- Օրինակ, տեսա, որ նույն Ստեփան Ասատրյանը, Արամայիս Թոխմազյանը, որ երկուսն էլ լոռեցի չեն, բայց Լոռիում իշխանությունների քարոզարշավին գլխաքանակ էին ապահովում՝ քաղաքացիական հագուստներով, եւ տեսնում ենք, որ իշխանությունները նաեւ կոպիտ կերպով չարաշահում են վարչական ռեսուրսները՝ սկսած համայնքապետարանների կոմունալ բաժնի աշխատակիցներից մինչեւ դպրոցի ուսուցիչներ: Իրենց նկատմամբ իշխանությունների կողմից պարտադրանք կա, որը, կարծում եմ, ազնիվ չէ: Նաեւ ընդդիմադիր գործիչների հասցեին իրենց վիրավորական արտահայտություններն են անընդունելի: Մարզպետը Բյուրականում շատ վատ արտահայտություն արեց, եւ գյուղացիներից շատերը դրանից վիրավորվել են: Այսինքն, իշխանություններին խորհուրդ կտամ, որ ատելություն չսերմանեն քարոզարշավի ժամանակ, այլ իրենց ծրագիրը ներկայացնեն: Ցավոք, օրինակ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, ծրագիր ներկայացնելու փոխարեն, մյուսների քննադատությամբ եւ մեղադրանքներ հնչեցնելով է զբաղվում: Իշխանությունները պետք է ավելի կոռեկտ իրենց պահեն, իշխանություններին սազական չէ թշնամանք ու ատելություն սերմանելը: Պետական պաշտոնյաներին ոչ հարիր ոճ են օգտագործում, որը ցավալի երեւույթ է:

- Փաշինյանի քարոզարշավի ժամանակ հաճախ տեսնում ենք կանանց, ովքեր ասում են, որ Փաշինյանը փրկիչ է կամ Հիսուսին հավասար մարդ: Սա չի՞ հիշեցնում կրոնական որոշ կազմակերպությունների գործելաոճ:

- Եկեղեցու նկատմամբ այդ ատելությունը, որ Նիկոլ Փաշինյանը գեներացնում է, նա դրանով, հավանաբար, փորձում է սիրաշահել տարբեր աղանդների ներկայացուցիչներին, եւ տոտալիտար այդ աղանդների ներկայացուցիչները, որ ծայրահեղական, հակաեկեղեցական կեցվածք ունեն, փորձում են սրբացնել Նիկոլ Փաշինյանին, որովհետեւ իրենք ընդհանուր պայքար ունեն ազգային արժեքների դեմ, Եկեղեցու դեմ, Վեհափառի դեմ եւ գտնում են այդտեղ իրենց հոգեհարազատ մարդուն, որը նույնպես, բացի իրենցից, թշնամանք եւ ատելություն է սերմանում Հայ առաքելական եկեղեցու, Վեհափառ հայրապետի դեմ: Այսօր այդ «բարեկարգում» անվամբ էջում տեսա մի կին՝ Ալմաստ Մուրադյան անունով, որը զրպարտում էր մեր եպիսկոպոսներին՝ ասելով, որ քաղաքականությամբ են զբաղվում, երբ որ եպիսկոպոսներն ընդամենը հորդորում էին քաղաքացիներին՝ ակտիվ ընտրությունների գնալ, եւ այս փուլում իրենց արած հայտարարությունն օրենքի շրջանակում է, շատ պատշաճ է: Տեսնում ենք, որ որոշ մարդիկ գումարի դիմաց պատրաստ են գալ, շողոքորթել, քծնել, բայց դա պատշաճ չէ մեր հասարակությանը:

- Եթե այս իշխանությունը վերարտադրվի, նրանց հակաեկեղեցական ծրագրերն ինչպե՞ս են կյանքի կոչվելու, եւ արդյո՞ք դա հաշվի առնելով եղավ քահանայաց ժողովի հայտնի հայտարարությունը:

- Իրենք հակասահմանադրական այդ կետերը որ մշակել են, դրանք կիրառելու որեւէ իրավասություն չունեն: Եթե անգամ վարչական ռեսուրսի կոպիտ չարաշահումով եւ ընտրակեղծիքներով Նիկոլ Փաշինյանը վերարտադրվի, ինքը որեւէ իրավասություն չունի՝ Եկեղեցու ներքին գործերին միջամտելու: Որեւէ մեկն իրեն նման մանդատ չի տվել, եւ ինքը դրա իշխանությունը երբեւիցե չունի: Եթե վարչական ռեսուրսը չարաշահելով կընտրվի, թող փորձի նախորդ եւ ներկա ընտրություններին տված խոստումները, որ օրենքի շրջանակում են, ի կատար ածել, որոնց համար ես լուրջ կասկածում եմ: Ինքն իր տված խոստումների հիմնական մասը չի կատարել եւ, բնականաբար, սա էլ չի անելու:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՂԱԶԱԽԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ ՓՈՐՁԸ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թանի որ ներկայում շատ է խոսվում հայ-ռուսական հարաբերությունների ընթացիկ վիճակի, Ռուսաստանի՝ Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի կոշտացման ու դրա հնարավոր հետեւանքների մասին, ներկայացնենք հետսովետական տարածքի երկրներից մեկի արտաքին քաղաքականության յուրահատկությունը, որը կարծում ենք ուսանելի կլինի Հայաստանի համար: Խոսքը Ղազախստանի մասին է:

Շատ փորձագետներ նշում են, որ ներկայում Ղազախստանը փորձում է իր համար հենարաններ ստեղծել Չինաստանում եւ Միացյալ Նահանգներում: Սակայն նաեւ չի խզում կապերը Ռուսաստանի հետ, ընդհակառակը՝ ավելի է ամրացնում:

Ռուս քաղաքագետ Կոնստանտին Կալաչեւը նշում է, որ Ռուսաստանը Ղազախստանի համար արտաքին առեւտրային շրջանառության 1/3-ն է, հիմնական ներդրողներից մեկը, դրա համար էլ Ղազախստանը, անկախ այն հանգամանքից, որ փորձում է իր արտաքին քաղաքականությունը, այսպես ասած, ռազմավարական բալանսավորման բերել, երբեք չի հրաժարվում Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերությունից:

Կալաչեւը նշել է, որ Ռուսաստանը ֆինանսավորում է Ալմաթիի մարզում ԱԷԿ-ի կառուցումը: Բացի այդ, ռուսական ապրանքները լիարժեք տեղավորված են ղազախական սպառողական զամբյուղում, երկրում էլ ռուսերենի իմացության խնդիր չկա, եւ ռուսերենն առօրյա շփման լեզու է այդ երկրի բնակչության ստվար հատվածի համար:

Պաշտոնական Աստանան բավական խելամիտ է պահում իրեն թե՛ ՀԱՊԿ-ում եւ թե՛ ԵԱՏՄ-ում, իսկ ԱՊՀ պարագայում հանդես է գալիս որպես այդ ֆորմատի վերածննդի հեղինակ: Ուշագրավ է այն, որ այսօրվա Ղազախստանն էլ, այդ երկրի գործող նախագահ Քասիմ-Ժոմարտ Տոկաեւի գաղափարների հիման վրա, վերաֆորմատավորվում է՝ ձեռք բերելով նոր ինքնություն եւ նոր Սահմանադրություն: Ձեւավորվում է նոր պառլամենտ՝ կենտրոնաձիգ վերահսկողական գործիքակազմով, հրաժարվում են քաղաքականության մեջ կլանային համակարգից:

Քաղաքագետ Քամրան Հասանովի կարծիքով՝ Ղազախստանն այժմ առաջ է մղում բազմավեկտոր արտաքին քաղաքականություն՝ համագործակցելով թե՛ Չինաստանի, թե՛ ԵՄ-ի եւ թե՛ Միացյալ Նահանգների հետ: Զուգահեռաբար, խորը գործակցություն կա նաեւ Թուրքիայի եւ, առհասարակ՝ թյուրքական աշխարհի հետ: «Այդ ամենով հանդերձ,- ըստ Հասանովի,- Աստանայում չեն մոռանում, որ Ռուսաստանը գլխավոր տնտեսական գործընկերն է, եւ հաշվի են նստում դրա հետ՝ արտաքին քաղաքականության ձեւակերպման հարցում»:

Փաստն այն է, որ 229 դպրոց չի գործելու

ԿԳՄՍ նախարարությունը երեկ հաղորդագրություն էր տարածել, որ հերքի անհերքելի փաստը՝ մարդկանց ապակողմնորոշի, թե Հայաստանում 2026 թվականին ոչ մի դպրոց չի փակվելու: «Ընտրություններին ընդառաջ որոշ քաղաքական ուժեր շարունակում են տարածել կեղծ տեղեկություններ այն մասին, թե իբր 2026 թվականի սեպտեմբերից Հայաստանում նախատեսվում է փակել 229 դպրոց: Եվս մեկ անգամ տեղեկացնում ենք, որ այդ պնդումները չեն համապատասխանում իրականությանը եւ հանդիսանում են ապատեղեկատվություն: Կրթության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունն ուղղված է կրթության հասանելիության ընդլայնմանը եւ որակի բարձրացմանը: Դրա վառ ապացույցն ամբողջ հանրապետությունում իրականացվող դպրոցաշինության եւ նախադպրոցական հաստատությունների կառուցման ու վերակառուցման լայնածավալ ծրագրերն են: Ցավալի է, որ կրթության ոլորտը շահարկվում է՝ հասարակության շրջանում անհիմն անհանգստություն առաջացնելու նպատակով: Հորդորում ենք առաջնորդվել բացառապես պաշտոնական եւ հավաստի աղբյուրներով: Նախարարությունը շարունակելու է հանրությանը տրամադրել ճշգրիտ եւ ամբողջական տեղեկատվություն՝ կրթության ոլորտում իրականացվող ծրագրերի վերաբերյալ»,- ասված է նախընտրական քարոզչության տրամաբանությամբ տարածված հաղորդագրության մեջ:

Կրթության փորձագետ **Սերոբ Խաչատրյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով թեմայի մասին, նկատեց. «Մենք կարող ենք օգտագործել տարբեր տերմիններ, կարող ենք տարբեր անուններ հորինել, կարող ենք պրոցեսն անվանել օպտիմալացում, զարգացում, միավորում, բայց կարեւորը բնավ այդ բառերն ու անունները չեն, խնդիրը հետեւյալում է. օրինակ՝ այս պահին Շիրակի մարզի Գուսանա գյուղում կա մեկ դպրոց: Շուտով այդ գյուղի դպրոցը չի լինելու, եւ այդ համայնքի երեխաները հաճախելու են հարեւան գյուղի դպրոց: Իրականությունը սա է: Թե սրա անունը ինչ կդնեն՝ օպտիմալացում, բացում, փակում, քանդում, թե ստեղծում, դա լրիվ այլ հարց է: Փաստն այն է, որ 229 դպրոց չի գործելու: Մենք կարող ենք դրա դրական եւ բացասական կողմերը քննարկել: Դպրոցների միավորում է լինելու, արդյունքում այդքան՝ 229 դպրոց չի գործելու»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆԱՇԵՆԻ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ԿՀԱՃԱԽԵՆ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ԴՊՐՈՑ

Քննարկումների նոր ալիքը հատկապես սրվեց, քանի որ Google Maps հարթակում փոխվել է բնակավայրի անվանումը՝ այժմ գրվում է Kyarki, որն այս գյուղի ադրբեջանական անվանումն է, իսկ «Տիգրանաշեն» տարբերակն այլեւս չի երեւում: «Հրապարակ»-ը զրուցել է Պարույր Սեւակ եւ Տիգրանաշեն համայնքների վարչական ղեկավար **Լյուդվիգ Ստեփանյանի** հետ:

- Վերջին շրջանում շատ է խոսվում, որ իշխանությունները ցանկանում են Տիգրանաշենն Ադրբեջանին հանձնել: Իշխանական մակարդակում ոչ միայն չի հերքվում, այլ նաեւ Նիկոլ Փաշինյանն անկլավների վերաբերյալ հարցին ի պատասխան նշել էր, որ, այո, ՀՀ տարածքում կան ադրբեջանական անկլավներ, որոնք պետք է վերադարձվեն:

- Նման խոսակցություններ ես չեմ լսել, ինչն էլ որ խոսվում է, խոսվում է հանրային մակարդակում: Այսինքն՝ այն, ինչ լսել եք այդ բովանդակությամբ ու մոտեցումներով, այդ ամեն ինչը մենք լսել ենք: Մեզ հետ գաղտնի խոսակցություններ չեն տարվում: Մենք էլ գիտենք այնքան, որքան դուք: Ինչ-որ բան հստակ ասելու համար պետք է իրավիճակին տիրապետես ու կարողանաս ճիշտ գնահատել իրավիճակը: Ինքը համահայկական հարց է, ճիշտ չէ, որ իմ կարծիքն ասեմ:

- Այս լուրերին ինչպես են վերաբերվում գյուղի բնակիչները:

- Միշտ, բոլոր ժամանակներում այս խնդիրն առկա է եղել, տարբեր իրավիճակներ են ստեղծվել: Ստեղծվել են պրովոկացիոն իրավիճակներ, ստեղծվել են նորմալ մոտեցումներ: Մարդիկ այնպես, ինչպես ապրում էին, հիմա էլ շարունակում են ապրել, բոլորն էլ հասկանում են իրավիճակը, տեղյակ են իրավիճակից, բայց ոչ մեկը դրանից խուճապահար չի եղել, ադապտացվել են էդ խոսակցություններին ու ապրում են:

- Քանի՞ մարդ է այսօր ապրում գյուղում: Գյուղի դպրոցը սեպտեմբերից փակվող դպրոցների թվո՞ւմ է:

- Գյուղում 40 տնտեսություն կա, մոտ 120 մարդ է ապրում: Դպրոց ունենք, բայց շատ վատ կարգավիճակի է, արդյունավետ չէ: Այնտեղ 4 երեխա է հաճախում: Բայց գյուղում այլ երեխաներ էլ կան, ուղղակի իրենք հաճախում են Պարույր Սեւակի դպրոց, 3 կմ է հեռու ընդամենը: Իրենք իրենց միջոցներով են երեխաներին բերում, մենակ առաջարկել ենք, որ տրանսպորտ տրամադրենք, ու լինելու է այդ տրանսպորտը:

- Սեպտեմբերից այդ 4 երեխաներն էլ են տեղափոխվելու Պարույր Սեւակ գյուղի դպրոց:

- Տեղափոխվում են, թե՝ չէ, դրա մասին բան չասեմ, բայց իմ կարծիքն ասեմ՝ արդյունավետության տեսանկյունից միանշանակ արդյունավետ է, որ երեխաները տեղափոխվեն: 4 երեխա է մնացել, պատկերացրեք՝ ամեն դասարանում մի երեխա նստած, իրենք էլ են մեղք, կգնան, կշփվեն իրենց տարեկից երեխաների հետ, ավելի լավ պայմաններում կսովորեն: Պարույր Սեւակի դպրոցը վերակառուցել են 300 դպրոցների ծրագրի շրջանակում: Լավ կլինի, որ դպրոցը չփակվի, որ Տիգրանաշենում տնտեսությունը 40-ի փոխարեն 500 դառնա: Միտքս այն չէ, թե մենք ինչ ենք երազում, այլ՝ այն, որ տվյալ իրավիճակում արդյունավետ կլինի այն, որ գան այստեղ:

- Դպրոցում դասավանդող ուսուցիչները ճւս կապահովվեն աշխատանքով:

- Շատ հավանական է, որ տեղավորեն աշխատանքի, բայց դա այն հարցն է, որ ես չեմ կարող միանշանակ պատասխանել: Նայած ստեղծված իրավիճակի, միգուցե բոլորն էլ այստեղ աշխատեն կամ մյուս գյուղերի դպրոցներում:

- Նախկինում Դուք հարցազրույցների ժամանակ բացառում էիք, որ մի օր Տիգրանաշենը կհանձնվի Ադրբեջանին, հիմա ճ՞ւ եք բացառում:

- Բայց այնպես է, որ ես իմ տպավորությունն եմ ասել, որ չեմ կարծում, որ էդպես կլինի: Ես չեմ ասում՝ բացառում եմ, թե չեմ բացառում, ես ասում եմ, որ հանրային տիրույթում տարածված տեղեկատվությունից բացի այլ ինֆորմացիայի չեմ տիրապետում: Ես էսպես որ նայում եմ, իշխանություններն իրավիճակն են ներկայացնում, որ, գիտեք ինչ՝ մենք ունենք այս իրավիճակը, բայց էդ իրավիճակի մեջ կարող է փոխհամաձայնություններ լինեն, որ, օրինակ, Արծվաշենը Հայաստանին վերադարձվի:

- Տիգրանաշենի բնակիչները կամ անձամբ Դուք կգնա՞ք Արծվաշենում ապրելու:

- Ինձ համար, եթե Արծվաշենը լինի Հայաստանի Հանրապետության պաշտպանության տակ, այդ թվում համաձայնեցված լինեն բոլոր մուտքուելքերը, միգուցե: Տիգրանաշենի բնակիչների փոխարեն ոչինչ չեմ կարող ասել, եթե նման իրավիճակ լինի, իրավիճակից բխող ելքեր էլ կգտնվեն: Անլուծելի իրավիճակներ չկան:

Վերջին օրերին կրկին ակտիվացել են քննարկումները՝ Տիգրանաշենն Ադրբեջանին հանձնելու իշխանությունների մտադրության մասին:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ՋՐՀԵՂԵՂԻՑ ՀԵՏՈ ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒՄ ԲԱՐԵՆՊԱՍՏ ԵՂԱՆԱԿ ՉԵՂԱ՞Վ

2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղը Տավուշի եւ Լոռու մարզերում 4 մարդու կյանք խլեց, մեծ վնասներ հասցրեց ենթակառուցվածքներին, գյուղացիական տնտեսություններին, անհատական բնակելի տներին, ոչ բնակելի տարածքներին, ֆիզիկական անձանց տրանսպորտային միջոցներին եւ տնտեսվարողներին: Բնական տարերքից տուժած որոշ թվով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պետբյուջեից դրամական փոխհատուցում տրամադրվեց: Իշխանությունը միլիարդավոր դրամներ ծախսելով պետբյուջեից տրված պարգեւավճարների, զանազան ֆեստիվառների, Ջենիֆեր Լոպեսի երեւանյան համերգի վրա, անցած 2 տարում չվերականգնեց ջրհեղեղից վնասված ենթակառուցվածքները: Ջրհեղեղից միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Ճամբարակի խաչմերուկի հատվածում 10 տեղ ճանապարհի եզրերը քանդվել են:

2024թ. դեկտեմբերի 4-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել, թե մայիսի 27-ի ջրհեղեղից վնասված հատվածների նորոգումը երբ է ավարտվելու: Մարզպետարանից հայտնել են. «Ճանապարհային դեպարտամենտի պատվիրատվությամբ իրականացվում են նախագծային փաստաթղթերի ձեռքբերման աշխատանքներ, որի առկայության պարագայում անմիջապես կիրականացվեն մրցութային գործընթացը եւ, հետեւաբար՝ շինարարական աշխատանքները: Շինարարական աշխատանքները կիրականացվեն 2025 թվականի 1-ին կիսամյակում»: 2025 թվականն անցավ, սակայն քանդված հատվածները չնորոգեցին: Այդ խնդրով 2025թ. դեկտեմբերի 1-ի մարզպետին կրկին հարցում եմ արել, Տավուշի մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Մ-4, Երեւան-Սեւան-Իջեւան-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Դիլիջանից մինչեւ 3-30 ավտոճանապարհի հետ հատման կետ հատվածում ջրհեղեղի հետեւանքով ողողված եւ փլուզված թվով 10 տեղամասերի վերակառուցման աշխատանքները կիրականացվեն 2026 թվականին»:

2026թ. մարտի 5-ին նույն խնդրով նորից հարցում եմ արել, այս անգամ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին: Մարտի 11-ին ստացել եմ ՏԿԵ նախարարի տեղակալ Ա. Դարբինյանի ստորագրությամբ պատասխան. «Մ4, Երեւան-Սեւան-Իջեւան-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Դիլիջանից մինչեւ 3-30 ավտոճանապարհի հետ հատման կետ հատվածում ջրհեղեղի հետեւանքով ողողված եւ փլուզված 10 տեղամասերի վերակառուցման աշխատանքներն իրականացվելու են «Մոստ կոնտրակտ» ՍՊԸ-ի կողմից: Կառավարության համապատասխան որոշմամբ, 526 518 000 դրամ միջոցներ են նախատեսվել աշխատանքների կատարման համար, աշխատանքները բարենպաստ եղանակային պայմանների դեպքում կմեկնարկեն»: Գարունն էլ անցավ, սակայն քանդված հատվածները չվերականգնեցին: 2024թ. մայիսի 27-ին վարարած Դեբեդը վնասեց երկաթուղային Այրում կայարան տանող կամուրջը: Որպեսզի երկաթուղային կայարանի հետ տրանսպորտային կապն ապահովվի, Այրում կայարանից Այրում քաղաք տանող երկաթուղային կամրջից, երկաթուղու չգործող ճյուղավորումից ռելսերը հանեցին, կամուրջը դարձավ տրանսպորտային միջոցների կողմից օգտագործվող: Թեեւ կայարանի կամուրջը վթարային է, որոշ վարորդներ չեն ցանկանում հավելյալ 300-400 մետր տարածք անցնել եւ օգտվել վերափոխված կամրջից:

Այրումի վարչական ղեկավար Արթուր Այվազյանն ասաց, որ մի քանի անգամ փակել են վթարային կամուրջը, սակայն դա օգուտ չի տվել, որոշ վարորդներ շարունակում են օգտվել վթարային կամրջից: Նա հայտնեց, որ նոր կամրջի նախագծային փաստաթղթերը կազմվել են, պատվիրատուն Ճանապարհային դեպարտամենտն է:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՁ ՀԱՄԱՐ ԱԿՆՀԱՅՏ Է, ՈՐ ՆԵՐԿԱՅԻՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՌԵԼ Է ԻՐԵՆ

*«Հրապարակի» զրուցակիցն է մանկավարժ **Արամ Խաչատրյանը**:*

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

- Դուք երկար տարիներ ապրել եք Ռուսաստանում: Թերեւս, շատերից լավ կարող եք բացատրել, թե ինչ հետեւանքներ կարող է ունենալ Հայաստանի համար Ռուսաստանի հետ հարաբերությունների ներկայիս լարվածությունը:

- Դուք ասացիք՝ լարվածություն: Ես ավելի կոնկրետ կասեմ՝ անհարկի եւ անհեռատես դիմակայություն: Հարց է ծագում՝ ո՞ւմ է պետք այդ դիմակայությունը, եւ ի՞նչ շահ է դրանից ստանում մեր երկիրը: Այսօր արդեն հասարակության տարբեր շերտեր իրենց վրա զգում են այդ քաղաքականության բացասական հետեւանքները: Գյուղատնտեսությամբ զբաղվող մարդիկ, արտահանողները, ծաղկագործները, բանջարաբույծները, միրգ արտադրողները կանգնած են լուրջ խնդիրների առաջ: Սակայն իշխանություններին, կարծես, դա չի հուզում: Մինչդեռ նրանք որեւէ նոր արդյունաբերական «հեղափոխություն» չեն իրականացրել, չեն ստեղծել այնպիսի տնտեսական միջավայր, որը կարող էր փոխհատուցել հնարավոր կորուստները: Փոխարենը՝ շարունակում ենք լսել ինքնագովազդ եւ տեսնել պետական միջոցների անխնա վատնում: Ռուսաստանից օրեցօր ավելի կոշտ հայտարարություններ են հնչում: Եթե այս հարաբերությունները շարունակեն զարգանալ նույն տրամաբանությամբ, մի օր կարող ենք արթնանալ եւ շոկի մեջ ընկնել գազի կտրուկ թանկացման լուրից: Այդ դեպքում դժվար կլինի մեղադրել ռուսներին: Որքա՞ն կարող է որեւէ պետություն հանդուրժել իր նկատմամբ ցուցաբերվող բացահայտ անտեսումն ու արհամարհանքը:

- Նիկոլ Փաշինյանը, պատասխանելով գազի հնարավոր թանկացման մասին զգուշացումներին, հայտարարել է, որ Հայաստանը պատրաստ է վճարել միջազգային գներով, որ մենք աննախադեպ հարստանալու ենք եւ այլն: Հաշվարկ կա՞մ այդ մոտեցման տակ:

- Իմ կարծիքով՝ ոչ: Դա ավելի շատ քաղաքական հայտարարություն է, քան տնտեսական հաշվարկ: Եթե Հայաստանի համար գազի գինը հավասարեցվի միջազգային շուկայական գներին, ապա խոսք կգնա ներկայիս գների համեմատ մի քանի անգամ թանկացման մասին: Որոշ հաշվարկներով՝ մինչեւ 600 դոլար: Սա պարզապես հերթական սակագնի փոփոխություն չի լինի, այլ ծանր հարված կհասցնի բնակչությանը, արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը, փոքր եւ միջին բիզնեսին: Գազի թանկացումը եւ էներգետիկ անվտանգության հետ կապված խնդիրները կարող են այնպիսի իրավիճակ ստեղծել, որ մեր ժողովրդի կյանքը դժոխքի վերածվի: Տնտեսությունը կփլուզվի, հանրապետության գոյատեւումն ապահովող հուսատու բոլոր «լույսերը» կհանգչեն: Այդ խավարի մեջ հայտնվելու է ժողովուրդը, ոչ թե իշխանության ներկայացուցիչները, որոնք շարունակում են ապրել պետական միջոցներով ապահովված իրականության մեջ:

- Իշխանությունները հակադարձում են՝ «մեզ ոչինչ չի խանգարի, մենք հզոր ենք, մեր բանակը վերազինվում է»: Ապացույցն էլ վերջին զորահանդեսն են համարում:

- Զորահանդեսն ինքնին վատ երեւույթ չէ: Ամբողջ աշխարհում դրանք անցկացվում են պետության ռազմական ներուժը ցուցադրելու, հասարակության մարտական ոգին բարձրացնելու եւ հակառակորդին զսպելու նպատակով: Սակայն ի՞նչ էր իրական նպատակը մեր դեպքում: Իմ տպավորությամբ՝ իշխանությունները փորձեցին ստեղծել արտաքին փայլի պատկեր, որը պետք է ծածկի առկա խնդիրները: Իսկ խնդիրները քիչ չեն: Թշնամին շատ լավ գիտի, որ վերջին տարիներին Հայաստանում լայնածավալ ռազմական զորավարժություններ գրեթե չեն անցկացվել: Գիտի նաեւ, որ զինված ուժերի թիվը նվազել է: Այդ մասին տարբեր առիթներով խոսել են նաեւ իշխանության ներկայացուցիչները: Բանակից հեռացել կամ հեռացվել են բազմաթիվ փորձառու սպաներ: Բանակի եւ հասարակության միջեւ գոյություն ունեցող բնական կապը թուլացել է, իսկ ռազմահայրենասիրական դաստիարակության ոլորտում ակնհայտ բացեր կան: Ցուցադրված ռազմական տեխնիկան կարող է արդյունավետ ծառայել պաշտպանական խնդիրների լուծմանը, եթե ապահովված լինի համապատասխան զինամթերքով եւ լիարժեք յուրացված լինի անձնակազմի կողմից: Սակայն ժամանակակից բանակը պետք է ունենա նաեւ զսպման լուրջ միջոցներ, որոնք հակառակորդին կստիպեն հաշվի նստել Հայաստանի հետ: Ուստի չեմ կարծում, թե այդ զորահանդեսը կարող էր որեւէ առանձնահատուկ տպավորություն թողնել մեր թշնամիների վրա:

- Ոմանք ասում են, որ Հայաստանի գլխավոր խնդիրն արտաքին քաղաքականությունը չէ միայն, այլ նաեւ՝ ժողովրդագրական վիճակը:

- Այո: Եթե շարունակվեն արտագաղթը, ծնելիության նվազումը, հասարակության հիասթափությունը, վաղ թե ուշ կհասնենք շատ վտանգավոր սահմանագծի: Ուժեղ պետություն կառուցելու համար անհրաժեշտ են ոչ միայն զենք եւ դաշնակիցներ, այլեւ՝ մարդիկ: Պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որ երիտասարդ ընտանիքները ցանկանան ապրել, աշխատել եւ երեխաներ մեծացնել Հայաստանում: Ցավոք, այսօր հազարավոր մարդիկ մտածում են ոչ թե հայրենիքում ապագա կառուցելու, այլ այն լքելու մասին: Սա ազգային անվտանգության խնդիր է ոչ պակաս, քան սահմանների պաշտպանությունը:

- Դուք քննադատում եք գործող իշխանություններին: Ո՞րն է այս իրավիճակից դուրս գալու ելքը:

- Ժողովուրդն է իր ճակատագրի տերը: Ինչպես ասում են՝ խեղդվողի փրկությունը խեղդվողի ձեռքում է: Սակայն ես չեմ կարծում, թե մեր ժողովուրդն այսօր անօգնական վիճակում է: Նա պարզապես պետք է ճիշտ ընտրություն կատարի՝ քաղաքացիները պետք է պատասխանեն մի պարզ հարցի. շարունակե՞լ այն ճանապարհը, որով վերջին տարիներին շարժվել է երկիրը, թե՞ ընտրել այլընտրանք: Ես՝ անձամբ, վաղուց եմ կատարել իմ ընտրությունը եւ չեմ թաքցնում դա: Համոզված եմ, որ Հայաստանը քաղաքական նոր թիմավորման եւ ազգային համախմբման կարիք ունի: Այդ պատճառով աջակցելու եմ Սամվել Կարապետյանին եւ հավատում եմ, որ նա կարող է դառնալ այն գործիչը, որի շուրջ կհամախմբվեն առողջ քաղաքական ուժերը: Կարծում եմ՝ արժե ուշադրություն դարձնել նաեւ այն քաղաքական դերակատարներին, որոնք տարիներ շարունակ մասնակցել են պետական կառավարմանը եւ ունեն անհրաժեշտ փորձ: Ժողովուրդն ինքն է որոշելու իր ընտրությունը, սակայն ակնհայտ է, որ ներկայիս իշխանությունը սպառել է իրեն: Ես հավատում եմ, որ Հայաստանը կարող է հաղթահարել այս դժվար շրջանը: Հավատում եմ, որ միասնական աշխատանքի, ազգային արժանապատվության վերականգնման եւ պետական մտածողության շնորհիվ մենք կարող ենք երկիրը վերադարձնել զարգացման եւ շենացման ճանապարհ:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 3.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

5 ԳՈՐԾՈՆ, ՈՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՆ ԴԱՐՁՆՈՒՄ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ



Արա ԱԼՈՅԱՆ

Հունիսի 7-ին հաշված օրեր են մնացել, հետզհետե ուրվագծվում, ամբողջանում է նախընտրական պայքարի պատկերը: Կարծում եմ, որ առնվազն 5 դրական գործոն կա, որոնք կարող են վճռել ԱԺ առաջիկա ընտրությունների ելքը:

1. Քաղաքական ուժերի մասնակցությամբ՝ հատկապես վերջին շրջանի հեռուստաբանավեճերը ՔՊ-ի քարոզչամեքենայի գլխավոր խոսափող Հ1-ի եթերում ակնառու են դարձնում իշխող ուժի քաղաքական դիակ դառնալու նախանշանները եւ մոտալուտ պարտության հավանականությունը: Առնվազն վերջին երկու բանավեճում պարզ դարձավ, որ առողջ միտքն ու փաստարկված քննադատությունն ի չիք են դարձնում գործող իշխանությունների ստերը, հուսահատ ճիչերն ու սպառնալիքները, մաշված պոպուլիզմն ու մանիպուլյացիաները, որքան էլ ասպարեզ նետեն ծանր հրետանի համարվող իրենց դեմքերին, օրինակ՝ Վահագն Ալեքսանյանին եւ Ալեն Սիմոնյանին:

2. Ընդդիմադիր ուժերի, հատկապես՝ գլխավոր ֆավորիտների եւ Փաշինյանի իշխանախմբի քարոզարշավների որակական տարբերությունը՝ կապված թե՛ մարդաշատության, թե՛ խոսույթի եւ թե՛ անցկացման մակարդակի հետ: Գործող ռեժիմը, նույնիսկ վարչական ռեսուրսն ապօրինի ներգրավելով, չի կարողանում նորմալ լսարան հավաքել, հավաքներն էլ գաստրոնոմիկ վոյաժների, սպառնալիքի, թշնամանք սերմանելու եւ կենցաղային զազրախոսությունների մասին են:

3. Եթե ՔՊ-ական թիմի քարոզարշավն ընթանում է հիստերիկ սպառնալիքների, անհոգ կերուխումի, լաչառության, մրցակիցներին սեւացնելու, երեսներին ուղիղ քննադատություն եւ ամոթանք ստանալու, հակադարձողներին վիրավորելու կամ ոտքի վրա նրանց կալանավորելու որոշում կայացնելու, հորինված հերոսներով սրտաճմլիկ տեսարաններ բեմադրելու եւ այլ խայտառակ միջադեպերով, ապա ընդդիմադիր առանցքային դերակատարների նախընտրական հանդիպումները զերծ են սկանդալներից, ատելության խոսույթից, նվազագույնի են հասցված էժանագին պոպուլիզմն ու խոստումները: Դրա փոխարեն ներկայացնում են ծրագրեր, կոնկրետ առաջարկներ, ապագայի հստակ տեսլական:

4. Արցախցիների համախմբվածությունը եւ ազդեցիկ կշիռը՝ ի հեճուկս Փաշինյանի արցախատյաց ելույթների եւ հանրային պոռթկումների:

5. Ընտրությանը մասնակցող ընդդիմադիր ուժերի՝ գոնե վերջին շրջանում համագործակցված գործելաոճը, ՔՊ-ի դեմ միավորվելու, միմյանց չթիրախավորելու պահվածքը: Այս ամենը հույս է ներշնչում, որ ընտրությունների վերջին ակորդը լինելու է հաղթական, բայց դրա համար հնարավորինս մեծ թվով ընտրողներ պետք է «ոչ» ասեն այս աղետաբեր իշխանություններին:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am